

Աւելի քան հարիւրամեայ ազգանուէր ծառայութեամբ հայ ժողովուրդին ներկայացող Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան պատմութիւնը դարձած է անբաժանելի մասնիկը հայ ժողովուրդի ընդհանուր պատմութեան եւ դեռ կը սպասէ իր պատմագրողներուն եւ ուսումնասիրողներուն:

Անցնող քանի մը տարիներուն որոշ աշխատանքներ կատարուեցան այդ ուղղութեամբ Հայրենիքի թէ Սփիւռքի մէջ, սակայն իրենց ծրագրումով, տարողութեամբ կամ բնոյթով անոնք մնացին մասնակի:

Կը յուսացուէր որ 1906ին Գահիրէի մէջ ծնունդ առած միութեան Կեդրոնական Վարչական Ժողովին պատուէրով ու հոգածութեամբ կատարուած պատմագրական ճիգը, որուն արդիւնքը լոյսին տրուեցաւ «Դար Մը Պատմութիւն Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան» խորագիրը կրող երկհատորեակով, - այլապէս ալ շնորհակալ ու շնորհաւորելի աշխատանք, - ըլլար աւելի պարփակուն: Բայց չէր:

Ցաւալի էր նաեւ լեզուական եւ խմբագրական անփութութիւնը՝ ընկողմանած զոյգ հատորներու ամբողջ տարածքին, կողքէ կողք<sup>1</sup>:

Կազմակերպութիւնը, ինչպէս իր առաջին ատենագրութիւնն իսկ կը նշէր յստակօրէն, կեանքի կոչուած էր «Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւն» անունով<sup>2</sup>, մինչ երկհատորեակը լոյսին բերուած է «Հայ Բարեգործական...» անունին տակ: Իսկ Միութեան գերագոյն ղեկավար մարմինը, որուն պաշտօնական անուանումն էր առաջին օրէն «Կեդրոնական Վարչական Ժողով»<sup>3</sup>, իբրեւ երկհատորեակին հրատարակիչ ներկայացուած է «Կեդրոնական Վարչութիւն» տարագումով:

Կողքէն սկսած այս զոյգ թերացումները կարծէք խորհրդանշական նախամուտքն են հատորը լեցնող լեզուական եւ յատուկ անուններու սխալներուն եւ ուրիշ թերիներու, որոնց ուղղումը կը կարօտի առանձին գրքոյկի մը եւ որոնք անհրաժեշտ կը դարձնեն երկհատորեակին վերահրատարակումը բծախնդիր սրբագրութենէ ետք:

Այդ թերիներու սրբագրումը հաւանաբար կատարենք այլ առիթով: Նպատակադրուածը, հո՛ս, հրապարակումն է կարգ մը փաստաթուղթերու, յուսալով որ անոնք ծառայեն Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան պատմութեան գործունէութեան կարգ մը մոտցուած էջերու յիշեցումին եւ ուրիշ էջերու աւելի խոր ուսումնասիրութեան:

Բոլոր փաստաթուղթերուն բնագրերը կը գտնուին Կեդրոնական Վարչական Ժողովին տրամադրութեան ներքեւ<sup>4</sup>:

Հրատարակութեան տրուող նիւթերը կարելի է խմբել երեք դասակարգումով: Առաջին խումբին կը պատկանին գրութիւններ, որոնք կը յուշեն թէ քանականներուն, երբ տակաւին հայ մտաւորականներ, գրողներ, ուսուցիչներ, նահատակ գրագէտներու կողակիցներ չէին թօթափած նիւթարարոյական հաշմիչ հետեւանքները Յեղասպանութեան, ինչպէս նաեւ Զմիւռնիոյ, Կիլիկիոյ

եւ այլ աղիտալի իրադարձութիւններու, միութեան Կեդրոնական Վարչական Ժողովը գնահատելի նախաձեռնութեամբ մը հիմը կը դնէր Հայ Մտաւորականներու Օգնութեան Յանձնաժողովի մը, որ նախատեսուած պիտի ըլլար տասնամեակներ ետք ստեղծուած Ալեք Մանուկեան Մշակութային Հիմնադրամին:

Բազմաթիւ նամակներէն հոս ներկայացուցած ենք քանի մը հատ միայն: Նամակներուն ամբողջութեան վրայ հակողներ անոնց մէջ պիտի գտնեն էջ առ էջ քակուող ողբերգութիւնը հայրենազրկուած մտաւորականներու եւ պիտի հաստատեն ՀԲԸՄի վարիչներուն փրկարար հոգածութիւնը: Այդ հոգածու վերաբերումին արտայայտութեան կը հանդիպինք արդէն Չօպանեանէն հոս ներկայացուող նամակներուն մէջ:

Հետաքրքրուողները նաեւ առատ նիւթ պիտի գտնեն ուսումնասիրելու համար ինդրագրերու լեզուաճական առանձնալատկութիւնները, բայց մանաւանդ հոգեբանական գիծերը վերապրած հայրողիներու, որոնք յստակօրէն կը զգացնեն թէ այլապէս անելանելի դրութեան մը հարկին տակ է որ կը դիմեն յատկացումի համար եւ թէ բնաւ պիտի չուզէին բեռ ըլլալ Հայ Ժողովուրդին ցաւերը ամոքելու սահմանուած Միութեան վրայ, երբ ան կանգնած էր գաղթական հայերու եւ վերաշինութեան կարօտ հայրենիքի բազմաթիւ ու բազմաբնոյթ կարիքները հոգալու մարտահրաւէրին դիմաց:

Փաստաթուղթերու երկրորդ խումբը կը ծառայէ վերբերելու համահայկական դիմագիծը ՀԲԸ Միութեան, որուն սամկալար ընդհանուր տնօրէնը դաշնակցական Միմոն Վրացեանի գլխաւորած «Նահատակ Գրագէտներու Բարեկամներ»ուն կ'ընծայէր նիւթական քաջալիրանք՝ Հայ մշակոյթի պահպանութիւնն ու զարգացումը գերիվեր նկատելով հատուածական նկատումներէ:

Վերջին, երրորդ խումբի փաստաթուղթերը կ'առնչուին ներգաղթին, հայրենաշինութեան, Խորհրդային Հայաստան-Սփիւռք յարաբերութիւններուն եւ իրարմէ տարբեր մտայնութիւններէ, հոգեխառնութիւններէ եւ դեռ ուրիշ բաներէ մեկնարկ կատարող մօտեցումներու: Թէեւ ներգաղթին եւ հայրենաշինութեան բաւական տեղ յատկացուած է վերը նշուած երկհատորեակին մէջ, իսկ է. Մելքոնեան մեր 3րդ ծանօթագրութեան մէջ լիշատակեալ հատորով տուած է հատուածներ այդ նամակներէն (էջ 221-222), հոս ներկայացուող փաստաթուղթերը կրնան լրացուցիչ լուսարանութիւններու դերակատարը զառնար:

Փաստաթուղթերու լեզուն նախընտրած ենք վերարտադրել ամենայն հարգատութեամբ, որպէսզի լեզուաբանական թեքումով ուսումնասիրողները անոնց մէջ գտնեն հեղինակներուն լեզուամտածողական հարազատ պատկերը, ինչպէս նաեւ իրենց տուեալ ժամանակահատուածին բնորոշ լեզուամշակութային շերտեր, որոնց մէջ իրենց դերը ունին հայրենաբնակներու համար Հայաստանի խորհրդայնացումը, իսկ հայրենազրկեալներու համար՝ համապատասխան երկիրներու տեղական պայմանները:

Յարգելի պարոն Քարտուղար՝,

Ստացած եմ Ձեր 2 քուակիր նամակը եւ ներփակ 400 ֆրանքի մանտաբոսքը՝ ուղղուած անուան եւ յանձնելի Տիկին Եարճանեանի՝ Մտատրականներու Օգնութեան Յանձնախումբի կողմէ, եւ ներկայ նամակաւ կը հաստատեմ Տիկին Եարճանեանի 400 ֆր. յանձնած ըլլալս որու կողմանէ անհունապէս շնորհակալ եմ Ձեր Միութեան:

Յարգանքներով՝

[L.] Համբարձումեան<sup>8</sup>

Poisy

6-7-25

Բ.

25 Յունվար 1926

Պիքարես

Edouard Colangian  
5, Strada Rumeoara 9  
(Roumanie) Bucharest

Ազնուաշուք Տ. Լեւոն Բաշալեան  
*Փարիզ*

Մեծանուն բարեկամ,

Անցեալ տարի, ի դիմաց Հ.Մ.Օ.<sup>9</sup> պատ. Յանձնաժողովին, ձեր 2 Ապրիլ 1925 քուակիր նամակով, տարեկան օժանդակութիւն մը հասցէիս դրկելու առթիւ, կը գրէիք ինձ հետեւեալ տողերը. «Պարտք կը համարինք յայտնել թէ մինչեւ տարւոյն վերջը (1925ի) կարելի պիտի չըլլայ մեզ նոր օգնութիւն մը ընել ձեզի»:», ատով անշուշտ վերապահելով ինձ 1926 ներկայ տարուան առթիւ տարեկան անհրաժեշտ օգնութիւն մը:

Ուրախ եմ յայտարարելով թէ առողջական խանգարուած վիճակս, մարմնոյս վրայ կատարուած վիրաբուժական երկրորդ գործողութենէ մը ի վեր, զգալապէս բարտոքած է, շնորհիւ ինձ համար շատ քանկ արժող մասնագիտական ելքերաբուժական խնամքներու (rayon X ultraviolet եւ radium)<sup>10</sup> գորս դեռ մէկ քանի ամիս շարունակել տալու սոխպողական հարկին մէջն եմ, բոլորովին ապահով ըլլալու համար sarcom-իս<sup>11</sup> անհետացմանը կամ անհետեանք մնալուն մասին եւ իբր cellulaire եւ localise<sup>12</sup> գայն բոլորովին չեզոքացած եւ անվնաս դիրքի մէջ դնելու համար: Այս առթիւ, այսօր իսկ մեծայարգ Տիար Տ. Կամսարականի<sup>13</sup> ուղարկած նամակիս մէջ ներփակած եմ իմ մասնագէտ բժիշկիս Sopp. Ստվեխանուի ինձ յատկացուած carnet de traitement<sup>14</sup>, որ երեք ամիս առաջ օրինական ընդհատումէ մը վերջ՝ պէտք էր ցայսօր արդէն իսկ կրկնուած ըլլար. բայց երկրորդ եւ վերջին տոյն անհրաժեշտ դարմանումը շատ քանկ արժելով ինձ համար՝ սոխպուած եղայ յապաղեցնել հակառակ կամքիս:

Հ.Մ.Օ. պատ. Յանձնաժողովը արդարեւ իր տարեկան համեստ օգնութեամբ դարձեալ ճշմարիտ մօր մը պաշտելի ձեռքը կարկառած պիտի ըլլայ ինձ, վերջին անգամ մըն ալ, բեթեցնելու համար մասնագիտական անհրա-

ծեշտ խնամքներէ առնուած իմ ծախքերու ծանր բեռը: Երեք զաւակաց հայր ըլլալով, իրենց ապագային սիրոյն, ստիպուած են իմ առողջութիւնս իրենց իսկ առողջութիւնը նկատել: Կը յուսամ թէ, նկատի առնելով իմ ծանր եւ պատասխանատու պարագաս, Հայութեան մեծագոյն պարծանքն եղող անաչատ եւ անբասիր եւ ճշմարտապէս մեծ Բարեգործականին այս տարուան գրական ֆոնտէն՝ անցեալ տարուրնէ աւելի լուրջ օգնութիւն մը պիտի տրամադրուի ինձ, եւ ասիկա վերջին անգամ ըլլալով, քանի որ, վերջնական ապաքինման մը ճամբուն վրայ, մօտիկ ապագայիս մասին մեծ ակնկալութիւններ ունիմ:

Իմ անկեղծ մեծայարգ բարեկամներս՝ Տիարք Ա. Չօպանեան<sup>15</sup>, Վ. Մալգեան<sup>16</sup> եւ Ա. Ենպուռով<sup>17</sup> եւ ուրիշներ, վերջին լուրջ օգնութեան մը մասին կը բաժնեն իմ հաստատ յոյս եւ ձայնակից են ինձ՝ զգածուած սրտով:

Ներփակ՝ պիտի գտնէք Թէոդիկի<sup>18</sup> այս տարուան *Ամենուն Տարեցոյց[ը]-ին*<sup>19</sup> 334 էջին մէջ արտատպուած «Բանուորական Առատուր» խորագրով քերթուածս զոր բարի կ'ըլլաք յանձնելու մեծայարգ Տիար Ա. Բիրումեանի<sup>20</sup>, rue de Grenelle, 79, յղելու համար զայն Երեւան, Կամսարական Մրցանակի Ժիւղիին: Շատ հպարտ պիտի զգամ ինքզինքս եւ ուրախ պիտի ըլլամ եթէ ձեր անձնական եւ քանկագին կարծիքն ունենամ սոյն գրութեանս մասին. միակ անպատեհութիւնը, երեւոյթապէս, սա է որ թրքահայ լեզուով գրուած է, եւ ես անշուշտ չպիտի ուզէի բնաւ կեղծել ծննդավայրիս չպատկանող լեզու մը:<sup>21</sup> Եթէ անպատեհութիւն կը տեսնուի պ. Ա. Բիրումեանի յանձնուելուն մէջ, չէ՞ կարելի որ դուք յանձն առնէիք հոգը՝ գրութիւնս *ուղղակի* Երեւան ուղարկելու առ որ անկ է: Շնորհապարտ պիտի մնամ ձեզ:

Նոյնպէս պիտի խնդրէի ձեր սիրելութենէն որ հաճէիք մղում տալ ամենապատիւ Չաւեն Սրբ.ի<sup>22</sup> հաւանութեան, ըստ որում, ուսուցիչ Տօր. Լ. Թաշճեանի<sup>23</sup> եւ Թէոդիկի քախանձանաց եւ անկեղծ փափաքին վրայ՝ խոստացած է զիս նաեւ՝ իբրեւ մասնագէտ ֆրանսերէնի՝ ուսուցչական պաշտօնի կոչել Նիկոսիայի Մելքոնեան երկսեռ Որբանոցին<sup>24</sup> յարկին տակ, բայց որ դեռ պաշտօնական հրաւեր մը չէ յղած ինձ՝ որբերուն ժամանումէն իսկ առաջ:

Կը ներք որ նամակս բաւականէն աւելի երկարեցաւ ինձ համար ստիպողական մէկէ աւելի խնդրանքներով:

Սպասելով անձկագին ձեր լաւագոյն լուրերուն, հաճեցէք ընդունիլ, մեծանուն բարեկամ, իմ խորին յարգանաց եւ երախտագիտական անհուն զգացմանցս հաւաստիքը:

Ձերդ անձնուէր՝

Եղ. Գօլանճեան<sup>25</sup>

Գ.

Փարիզ, 4 Մարտ 1927

Վսեմ Տիար Գաբրիէլ Նորատունկեան<sup>26</sup>

Փոխ-Նախագահ Հ.Բ.Ը. Միութեան

Փարիզ

Տէր Նախագահ,

Հայ Մտաւորականներու Օգնութեան Յանձնաժողովը, շնորհիւ Բարեգործական Միութեան վեհանձն առատաձեռնութեան, 1926ին ես կրցաւ իր



27th Sept 1927

Dear Sir,

Handwritten notes in Armenian script, including the name 'Մանուկ Գոհար' and other illegible text.

Handwritten notes in Armenian script at the top right of the page.

Handwritten initials or mark.

եղբայրական օժանդակութիւնը ընծենել կարելոր թուով մը հայ մտատրականներու, որոնք, առանց այդ օգնութեան, անտանելի եւ նոյն իսկ եղբրական կացութեան մը մէջ պիտի գտնուէին:

Նպաստէն օգտուողներուն մէջ կը գտնուին այնպիսի անուններ որոնք մաս կը կազմեն ազգային ժառանգութեան. այսպէս նպաստներ ստացած են այրի Տիկին Մամուրեան<sup>27</sup>, եւ Պէշիկբաշլեանի<sup>28</sup> ազգական համանուն երիտասարդ բանաստեղծը<sup>29</sup> դարմանուելու համար, ինչպէս եւ ծանօթ բանասէր Մարկոս Աղաբէգեանցի<sup>30</sup> որդին: Յանձնաժողովս օգնութեան հասած է նահատակուած մտատրականներու այրիներուն եւ զաւակներուն, եւ կարգ մը հին ուսուցիչներու որոնք ազգային ժառայութեանց անբողջ անցեալ մը ունին իրենց ետեւ:

Մեր հաստատ համոզումն է որ մեր Յանձնաժողովը իրական պէտքի մը կը համապատասխանէ, հետեւաբար կը խնդրենք որ Բարեգործական Միութեան Կեդրոնական Վարչութիւնը բարեհաճի շարունակել իր այնքան ազնուօրէն սկսած գործը եւ այս տարի ալ գումար մը քուէարկէ Մտատրականներու Օգնութեան Յանձնաժողովիս համար:

Մնամք անկեղծ յարգանքօր  
Ընդհանուր Բարտուղար Նախագահ  
Լ. Բաշալեան Տիգրան Կամսարական

Գ.

18 Մարտ 1927

Տիկին Գոհար Մելքոն Կիրճեան<sup>31</sup>  
Կ. Պոլիս

Յարգելի Տիկին,  
Հայ Մտատրականներու Օգնութեան Յանձնաժողովս նկատի առնելով ձեր դժնդակ կացութիւնը եւ փափաքելով օգնութեան հասնիլ ձեզ, որոշեց ձեզ յատկացնել միանուագ հինգ հարիւր (500) ֆրանք, զոր կը ստանաք ներփակ

չերով քաղաքիդ Գրետի Լիոնե Պանքին վրայ: Խնդրելով որ առ այդ ստացա-  
գիր մը որկեր մեզ,

Մնամ անկեղծ յարգանք  
ՀՄՕՅ-ի ընդ. քարտուղար

Ե.

1928 Յունր. 8  
Կ. Պոլիս

Ազնուաշուք  
Տ. Վահան Մալեգեան  
Տնօրէն Հայ Բարեգործական Միու-  
թեան

Ազն. Տիար  
Ձեր ազնուութեանը դիմում մը  
կատարելու հարկադրանքին տակ կը  
գտնուիմ, զորս կը յուսամ որ պիտի  
հաճիք գոհացում տալ, նիւթական

շատ անձուկ պայժաններս նկատի ունենալով:

Ազն. Տէր, կարդալով Բարեգործական Միութեան այն յայտարարութիւնը,  
որով որոշած է կարգ մը կարօտ մտատրականներու անհրաժեշտ օժանդա-  
կութիւնը ընել, ներկայիս կը փութամ խնդրել Ձեզմէ, որ հաճիք զիս եւս  
նկատի ունենալ, երկար ատենէ ի վեր արդէն հիւանդ ըլլալով, եւ ներկայիս  
նոր գործողութեան մը պէտքը ունենալով մասնագէտ բժիշկի մը կողմէ:

Ազն. Տիար, չեմ կարծեր որ մերժումի մը հանդիպի իմ այս խնդրանքս  
պատ. Միութեանդ առջեւ, քանի որ զանազան առիթներու մէջ միշտ պարզած  
եմ իմ համակրութիւններս այս մասին, վեր առնելով անոր օգտաշատ գործու-  
նէութիւնը, մեր հասարակական կեանքին մէջ:

Ասոնցմէ միայն մէկը ունենալով [անընթեռնելի] այժմ ի ձեռին, կողար-  
կեմ Ձեզ ներկայիս, գաղափար մը տալու համար այն անսահման համակ-  
րութիւնս, որ միշտ ունեցած եմ Միութեանդ մասին:

Յուսալով որ չըսլիտի ուզուի զիս տառապիլ այսպիսի անտանելի հիւան-  
դութեան մը մէջ, կը խնդրեմ որ ընդունիք թանկագին շնորհակալութիւններս եւ  
յարգանքներս Ձերդ միշտ անկեղծութեամբ

Ա. Տէր Մինասեան<sup>32</sup>

Հասցէ «Նոր Լուր»<sup>33</sup>

Զ.

Փարիզ, 28 Փետրվար 1928

Վսեմ Գաբրիէլ Էֆ. Նորատունկեան  
Փոխ-Նախագահ Հ.Բ.Ը. Միութեան  
Բարիզ

Վսեմաշուք Տէր,  
Հայ Մտատրականներու Օգնութեան Յանձնաժողովը, շնորհիլ Բարե-  
գործական Միութեան վեհանձն առատաձեռնութեան, 1927ին կրցաւ իր եղ-

բայրական օժանդակութիւնը ընձեռել կարեւոր թուով մը հայ մտաւորականներու, որոնք, առանց այդ օգնութեան, դժնդակ էր նոյն իսկ եղերական կացութեան մը մէջ պիտի մնային:

Նպաստէն օգտուողներուն մէջ կան մեր նահատակուած մտաւորականներու այրիներ եւ որդիներ, եւ կարգ մը հին ուսուցիչներ որոնք ազգային ծառայութեան ամբողջ անցեալ մը ունին իրենց ետեւ: Յանձնաժողովս միանգամայն իր աջակցութիւնը ընձեռեց Կ. Պոլսոյ կարգ մը հայ ուսուցիչներու որոնց կացութիւնը հետզհետէ կը դժուարանայ:<sup>34</sup>

Մեր երեք տարուան փորձառութեամբ համոզում գոյացուցած ենք թէ այս Յանձնաժողովը իրական պէտքի մը կը համապատասխանէ, հետեւաբար կը խնդրենք որ Բարեգործական Միութեան Կեդր. Վարչութիւնը բարեհաճի շարունակել իր այնքան ազնուօրէն սկսած գործը եւ 1928ին ալ գումար մը քուտարկէ Մտաւորականներու Օգն. Յանձնաժողովիս համար:

Մնամք անկեղծ յարգանք

Ատենադպիր<sup>35</sup>

Լ. Բաշալեան

Ատենապետ<sup>36</sup>

Տիգրան Կամսարական

Է.

Գերագնի

Տիար Վ. Մալեգեան

Տնօրէն Հայ Բարեգործականի

Բարիզ

Համաճարակին ենթարկուած՝ անկողնոյ կը ծառայեն, վիճակս տագնապալի ըլլալով, գոնէ կը յուսամ անողորբ հիւանդութեան դիմադրել: Քիչ ատենէն արդէն ֆիզիքականս կորսնցնելով, բախտին ձգուած եմ:

Առ այժմ, Հայ Բարեգործականին գթութեան կ'ապաւինիմ: Մտաւորականներու հանդէպ ձեր օգնութիւնը չէք զլանար, գտնուելով դուք անոր գլուխը:

Խիստ բացառիկ տագնապ մըն է որ եկաւ Աթէնքի համաճարակէն: Հիւժեալ եւ անօգնական՝ ձեր գերագնութեան գրել առաջադրեցի:

Հայ Բարեգործական Միութեանը մօտ, անշուշտ արձագանգ պիտի գտնէ հայ մտաւորականի մը դիմումը, առաջին անգամ ըլլալով:

Յուսալով եւ սպասելով ձեր օգնութեան

Մնամ ակնդէտ

Լեւոն Էսաճանեան<sup>37</sup>

928-9-8

Քօքինիա

Հասցէս

L. Essajanian  
c/o Pharmacie Socrate  
Kokinia-Pirée  
(Grèce)

Մեծայարգ Տ. Լ. Էսաճանեան  
Զօրինիա-Բիրեա

Յարգելի Տիար,

Ստացայ ձեր 9 ամսաքի նամակը, որուն պարունակութիւնը ինձի անկեղծ ցաւ պատճառեց, քանի որ թէ ֆիզիքապէս եւ թէ տնտեսապէս կը տառապիք:

Միութեանս մտաւորականներու հիմնադրամը իր նուազագոյն սակին զեղջուեցաւ այս տարի, եւ գրեթէ սպառած ըլլալուն հազիւ 600 ֆրանքի գումար մը կրնամ փութացնել ձեզի ներփակ չէրով: Կը յուսամ թէ այս փոքրիկ օգնութիւնը կ'ամօքէ ձեր վիճակը՝ իբրեւ համակրանքի արտայայտութիւն մը:

Անկեղծ յարգանքով

Վ. Մալեգեան

Թ.

Գերազնի

Տիար Վ. Մալեգեան

Վարիչ-Պատուիրակ Հայ Բարեգործականի

Բարից

17 Սեպտմ. 1928 թուակիր եւ Ձեր ստորագրութեամբ Հայ Բարեգ. Ընդհ. Միութեան պաշտօնագիրը եւ ներփակ 600 (վեց հարիւր) ֆրանքի չէքը ստացած եմ, իբր անմիջական օգնութիւն:

Հակառակ Միութեանդ մտաւորականներու հիմնադրամը իր նուազագոյն սակին զեղջուած եւ սպառած ըլլալուն՝ Ձեր փութկոտ եւ համակրանքի վերաբերումը գոհունակութիւն առթած է տագնապեալիս համար:

Այս առթիւ, Հայ Բարեգործական Միութեան եւ Ձեզ խորին շնորհակալիք:

Անկեղծ յարգանքով

Լեւոն Էսաճանեան

1928-10-5

Զօրինիա (Բիրեա)

(Յունաստան)

Ժ.

27 Յունիս 1928

Մեծայարգ Տ. Բ. Չարդարեան<sup>38</sup>  
Նիս

Յարգելի Տիար,


Միութեանս Բրորականտի Յանձնաժողովի<sup>39</sup> մեր պաշտօնակից Տ. Չօպանեանէ ինձեցանք որ հիւանդութեան պատճառաւ անձուկ դրութեան մէջ կը գտնուիք, եւ ի յարգանս ձեր ողբացեալ հօր<sup>40</sup> յիշատակին պարտք սեպեցինք Մտաւորականներու հիմնադրամէն փոքր օգնութիւն մը ընձեռել ձեզի:

Ներփակ ձեզի ուղարկելով 700 ֆրանքի գումար մը, շուտափոյթ ապաքինում կը մաղթենք ձեզի:

Անկեղծ յարգանքով  
Վարիշ-Պատուիրակ եւ Ընդի. Տնօրէն  
Վ. Մալէզեան

ԺԱ.

12 Յունիս 1929



Յարգանքով  
Տիար Վահան Մալէզեան  
Տնօրէն Հ.Բ.Ը. Միութեան  
ՓԱՐԻՉ

Մեծանուն Տէր,

Երկ տեղոյս պետական հիւանդանոցէն վերադարձիս՝ պատին ունեցայ ստանալու Ձեր գրութիւնն ու ներփակեալ (500) հինգ հարիւր ֆրանսական ֆրանքի չէք մը: Անշուշտ է որ այս օգնութեան համար կը պակսի ինծի երախտագիտական բառ մը, որովհետեւ այնպիսի ժամանակի մը կը հասնի զոր չեմ կրնար բացատրել:

Գիտե՛մ, շատ լաւ կը մտաբերեմ թէ Հ.Բ.Ը. Միութեան այս բացառիկ օգնութիւնը, որ կ'ըլլայ ինծի մեծ զոհողութիւն մըն է եւ թէ շա-

փագանց ծանր ու դառն է ինծի համար այդ զոհողութենէն նպաստատրուիլ... քայց ինչ ընեն որ այսօր գրկուած եմ աշխատելու կարողութեմ, գրեթէ կազմալուծուած վիճակի մը ենթարկուած եմ եւ օրապահիկ մը չ'ունիմ: Չեմ մոռնար յիշելու թէ իմ այս աղիողորմ վիճակս տեսնելով՝ տեղոյս Աւետարանչական Ընկերութեան Վերապատուելի Բասթօրը՝ Իուհաննէս Էհման՝ գրեց Ֆրանքֆորդի «Բարեսիրաց Ընկերութեան» եւ անկից 12,000 Լէվայի օգնութիւն մը հասցուց ինծի եւ ես այդ գումարով մօտ վեց ամիս ապրեցայ: Նոյնպէս՝ չեմ մոռնար յիշատակելու թէ այդ Ընկերութեան պատկանող երկու Բասթօրները – Serus եւ Bauch – փութացին յայտնելու թէ երկուքը մէկանց 1 անգլիական ոսկի կը յատկացնեն ինծի մինչեւ մահս: Այդ մէկ անգլիական ոսկին գոր աճէն ամիս կը ստանամ կանոնաւորապէս, յատկացուցած եմ տանս վարձքին: Կը մնայ ապրուստիս հոգը: Այդ ալ պիտի սպասեմ մեր բարեսէր ազգայիններէ: Շուրջ քառասուն տարի կրթական գործին նուիրուող մշակ մը եւ 20 կտոր հեղինակութիւններ ազգին զաւակաց տուող չքաւոր վաստակաւոր մը, անշուշտ է որ պիտի չը մնայ լքուած, եւ *անօրի պիտի չը մեռնի*:

Չը գիտե՛մ... եթէ հնարաւոր է ամսական փոքրիկ գումար մը թող Հ.Բ.Ը. Միութիւնն ընէ: Տարիքս 60-ի կը մօտենայ... եւ կազմալուծեալ վիճակովս շատ պիտի չը կրնամ ապրիլ: Անոնք որ կրթական հոյակապ տաճարներ կը կա-

ռուցանեն, թո՛ղ անտես չ'առնեն այդ տաճարներու մէջ երկար տարիներ ծառայող եւ այսօր անոնց սիւներուն անկիւնը գրութեան կարօտ վիճակի մը հասած գրական ու կրթական մշակի մը թշուառութիւնը:

Ընդունեցէք իմ անկեղծ յարգանքներս!


Դժբաղդ գրական ու կրթական  
մշակ

Ա. Շիտանեան<sup>41</sup>

Յ.Գ.- Կը ներքեք որ անվերապահ կերպով բովանդակ թշուառութիւնս Ձեզ պարզելու համարձակութիւնը կունենամ:

Կը սպասեմ Ձեր պատասխանին:- Նոյն<sup>42</sup>

ԺԲ.



Միտք  
Երևանի մը մէջ գոր վերջերս ինծի  
գրած է Վենետիկէն, Կոստան Չարեան<sup>43</sup>  
կ'ըսէ թէ կեանքը այնքան սղած է հոն եւ իր  
միջոցներն այնքան նեղ են, որ ստիպուած է  
իր ընտանիքին մէկ մասը Թրանսիլվանիա  
փոխադրել, որովհետեւ կեանքը հոն անելի  
աժան է<sup>44</sup>...

Սիրելի Մալգեան,

Նամակի մը մէջ գոր վերջերս ինծի գրած է Վենետիկէն, Կոստան Չարեան<sup>43</sup> կ'ըսէ թէ կեանքը այնքան սղած է հոն եւ իր միջոցներն այնքան նեղ են, որ ստիպուած է իր ընտանիքին մէկ մասը Թրանսիլվանիա փոխադրել, որովհետեւ կեանքը հոն անելի աժան է<sup>44</sup>...

Այդ տողերը վրաս գէշ ազդեցին. Չարեան մեր լաւագոյն գրագէտներէն մէկն է այս ըրպէիս, եւ կարելի չէ անտարբեր մնալ իր այս դժուար կացութեան հանդէպ. թէպէտեւ ինք ոեւէ օգնութիւն չէ ուզած եւ իր վիճակը բացատրած է *Անահիտի*<sup>45</sup> երկրորդ թիւին յօդուած մը հասցնել կրցած չլլալուն պատճառը ցոյց տալու համար, բայց կարծեմ թէ լաւ կ'ըլլայ որ «Մտատրականներու Ֆօնտ»-էն գումար մը դրկել հաճիս իրեն: Ինչ ալ ըլլայ գումարը, Բարեգործականի կողմէ

այսպիսի ժեսք մը,- իր գրական ընկերներուն կողմէ նախաձեռնուած,- սփռվանք մը կ'ըլլայ իրեն, թեթեւացում մը իր հոգեկան անձկութեան:

Իր հասցէն է.

Mr. Constant Zarian

Via Sentari 9 a.

Lido

(Italie) Venise

Սիրալիր բարեւեներով

քոյդ

Ա. Չօպանեան

Փարիզ, 9 Օգոստ. 1929<sup>46</sup>

Սիրելի Մալեգեան,

Նամակդ ստացայ: Այս իրիկուն Փարիզ մեկնող բարեկամի մը ձեռքով կը դրկեմ պատասխանս, յուսալով որ ձեռքդ կը հասնի մեկնելէ առաջ:

Նամակս քեզ գոհ ձգեր է, բայց բուկինդ զիս գոհ չձգեց:

Չարեանին շատ սրտաշարժ պարագան երբ բացատրեցի քեզի եւ առաջարկեցի որ բացառութիւն մը ընենք եւ գումար մը դրկենք զէք իբր համակրութեան ժեսք, բոլորովին համաձայն եղար, միայն դրկուելիք գումարին չափին համար որոշումդ վերապահեցիր, տեսնելու թէ ինչ մնացած է ֆօնտէն:

Ատոր վրայ, պատասխանելով Չարեանի նամակին, գրեցի որ Վ. Մալեգեան, ինձմէ իմանալով Չարեանի դժուարին կացութիւնը, Մտաւորականներու Զօնտի գումարիկ մը պիտի դրկէ. հիմայ թէ չստանայ, ես *քեփազէ*<sup>47</sup> կ'ըլլամ: Եթէ վարանում ցոյց տուած ըլլայիր խօսած միջոցիս, բնականաբար ոչինչ կը գրէի Չարեանին:

Իր դիմում ըրած չըլլար փաստ չէ – ոչ Չերազը<sup>48</sup>, ոչ Շիրվանզադէն<sup>49</sup>, ոչ տիկին Եսայեանը<sup>50</sup> դիմում ըրին. մենք ընդ առաջ զացինք իրենց պէտքերուն. Չարեանը մեր առաջնակարգ բանաստեղծներէն եւ գրագէտներէն մին է. դիմում չեն ըներ այդպիսի մարդիկ, եւ դիմում ընել չկրցողներուն համար է գլխաւորապէս որ այս ֆօնտը հաստատուեցաւ: Եկուր, եղբայր, գոնէ 5-600 ֆրանք մը դրկէ եւ Պերպլեանին<sup>51</sup> յանձնարարէ որ նամակով մը դրկէ [անընթեռնելի] այս պատասխանատու եւ փափուկ առաքելութեան միջոցին: Ապա թէ ոչ ես գրպանէս պիտի դրկեմ 500 ֆրանք, որովհետեւ չեմ կրնար հոս հանգիստ ընել գիտնալով որ մեր ամենէն բանկագին պաշտօնակիցներէն մին դժուար կացութեան մէջ է եւ բան մը չենք ըրած իրեն համար: *Précident*<sup>52</sup> ալ չըլլար Բարեգործիդ տրցակէն, բանի որ դուրսը մարդ չիմանար: Յուսալով որ զիս յուսախար չես ըներ, սիրով կը բարեւեն քեզ:

Քոյդ Ա. Չօպանեան<sup>53</sup>

ԺԴ.

Սիրելի Պ. Պերպլեան

Չէքը դրկած էի Պ. Չարեանին: Ներփակ կը դրկեմ ձեզի ստացագիրը գոր ստորագրելով դարձուցած է ինձի:

Ես Փարիզ պիտի դառնամ Սեպտ. 9ին, Երկուշաբթի:

Երեքշաբթի կուգամ Բարեգործականի գրասենեակը:

Սիրով ձերդ

Ա. Չօպանեան

Սքելլա Փլած, 1 Սեպտ. 1929

ԺԵ.

Գահիրէ – 18 Օգոստոս 1929

Մեծայարգ

Տիար Տիգրան Պէյ Կամսարական

Ատենապետ «Հայ Մտաւորականներու Օգնութեան Յանձնախումբ»-ին  
ի Փարիզ

Մեծայարգ Տիար,

Ստորագրեալս, Արամ Մասեհեան, բնիկ պոլսեցի վկայեալ ուսուցիչ Կ. Պոլսոյ Կեդր. Վարչութեան Ուսումնական Խորհուրդէն՝ թուրք բռնակալ ռեժիմի հալածանաց եւ ցկեանս արտրի տառապանքներու ենթարկուելէ յետոյ՝ թուրք սահմանադրութեան հռչակմամբ<sup>54</sup> Եգիպտոս ապաստանած եմ:

Քսան տարիներէ ի վեր Գահիրէ համազգիներուս քով ասպնջականութիւն վայելած լինելով, 12 տարիներ եւս շարունակաբար Թաշճեան քոյրերու վարժարանին<sup>55</sup> մէջ քրտնաջան աշխատած եմ իբր ուսուցիչ լեզուաց ջանալով ինովսանն օգտակար հանդիսանալ մանկտոյն:

Վերջին Ապրիլ ամսոյ 23ին երբ վարժարանէն տուն կը վերադառնայի, ճակատագրական դժբաղդութեամբ մը քանի մը ժամերու մէջ տեսողութիւնս եւ ապա առողջութիւնս եւս խանգարուեցաւ, որով հարկադրուեցայ այդ թուականէն սկսեալ դադրիլ աշխատանքէ:

Այս դժբաղդութիւնս բարտեպու համար դիմեցի տեղոյս Հայ. Բարեգ. Ընդհ. Միութեան որպէսզի ինձ տեւական հասոյթ մը տրամադրէին. ցաւ ի սիրտ կը յայտնուին ինձ ըսելով որ նման պարագաներ մեզ չեն պատկանիր եւ կատիպեն ինձ ուղղակի դիմել Հայ Մտաւորականներու օգնութեան յանձնախումբի վարչութեան ի Բարիգ:

Ուստի կը խնդրուի Ձեր բարեսիրտ զգացումներէն, Տիար Ատենապետ, որ լրջօրէն նկատի առնէք այս խնդրագիրս եւ վայրկեան առաջ փութաք պէտք եղած օգնութիւնները ինձ յատկացնել:

Անձկանօք սպասելով Ձեր խղճամիտ յանձնախումբէն գրութեանս գործադրութեանը գոր կը յուսամ անպայման պիտի կարենայ փրկել տեսողութիւնս եւ կեանքս միանգամայն:

Մնամ ձերդ երախտապարտ  
Արամ Մասեհեան<sup>56</sup>

Յ.Գ.- Ներփակ պիտի գտնէք երկու նամակներ Հայ. Բարեգ. Ընդհ. Միութեան կողմէ որկուած իմ հասցէիս:

Թիւ 35011/268 – 17 Յուլիս 1929

Թիւ 35002/289 – 30 Յուլիս 1929

Հասցէս է՝

Aram Massehian

chez Mr. Ardache Papazian

No 3 Rue Ibn Idris, 3

Daher

(Egypte) Le Caire

ԺՁ.

Hermitage Hotel

Esplanade du Casino

La Baule

Լապօլ 3 Սեպտ 29

Միրելի Բարեկանս [Պերպէրեան],

Ներփակ կը որկենք քեզի սրտաճմլիկ նամակ մը<sup>57</sup>:

Մալճեանը բացակայ է. չեմ գիտեր թէ մտաւորականներու համար ինչ տրամադրելի գումար ունինք, եւ եթէ ունինք՝ ինչպէս կրնանք մաս մը յատկացնել անկէ դժբաղդ խնդրարկուին, ի բացակայութեան վարիչ պատուիրակին:



Մեր մատենաշարին 9րդ հատորը, Երուանդ Օտեանէն<sup>66</sup> ընտրուած էջեր, շուտով տպագրութեան պիտի յանձնուի: Անոր պիտի յաջորդեն ուրիշ սիրուած եւ նահատակ գրագէտներու երկերը, ինչպէս Երուանդ Սրմաքէշխանլեան<sup>67</sup>, Արտաշէս Յարութիւնեան<sup>68</sup>, Ռուբէն Սեակ<sup>69</sup> եւ Տիրան Չրաքեան<sup>70</sup>:

Այս նութիական ձեռնարկը, որ վստահ ենք, ամէն հայու սրտին կը խօսի, կը կարօտի գուրգուրանքի եւ բարոյական եւ նիւթական աջակցութեան: Թոյլ տուէք հետեւաբար, խնդրել Հայ. Բարեգ. Ընդհ. Միութեան վարչական խորհուրդէր, որ անհրաժեշտ ուշադրութիւնը ընծայելով անոր, իբրեւ լրացուցիչ մէկ մասը իր յառաջադրած ու արդէն գործադրած նպատակներուն, հաճի նիւթական օժանդակութեամբ մը սատարել անոր զարգացման եւ տեսականացման:

Եւ որպէս զի մեզի ընծայուած նպաստը ռեւէ ձեւով փոխարինուի, յանձն կ'առնենք, փափաքուած քանակութեամբ գիրքեր, ձեր տրամադրութեան տակ դնել, ձեր հսկողութեանը ենթակայ կրթական հաստատութիւններու մատենադարաններուն իբրեւ նուէր, տրուած ըլլալով, որ մեր հրատարակած եւ հրատարակելիք հատորները գերազանցապէս գրական գիրքեր են եւ ընթերցանութեան համար ա'յնքան օգտակար:

Խորապէս կը հաւատանք, որ մեր այս դիմումը անհետեւանք պիտի չմնայ, եւ Հայ Բարեգ. Ընդհ. Միութեան բարձր խորհուրդը գնահատելով մեր ազգօգուտ ձեռնարկը, պիտի փութայ իր քաջալերութեան դրական ապացոյցը տալ<sup>71</sup>:

Կանխաւ յայտնելով ձեզ մեր սրտագին շնորհակալութիւնը, կը խնդրենք որ ընդունիք մեր յարգանաց հաւաստիքը:

ի դիմաց Նահատակ Գրագէտներու  
Բարեկամներու Վարչութեան  
Գանձապահ Ատենապետ  
Սկրտիչ Պարսամեան<sup>72</sup> Ս. Վրացեան<sup>73</sup>

ԺԸ.

ՆԱՀԱՏԱԿ ԳՐԱԳԷՏՆԵՐՈՒ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ  
ՀԻՄՆՈՒԹ ՓԱՐԻԶ 1929  
ՀԱՍՅԷ՝ M. BARSAMIAN 121, Rue Marcadet, Paris (18°)

Փարիզ, 3 Նոյեմբեր 1938

Ազնուայարգ  
Պարոն Նախագահ եւ  
Պատ. Անդամներ  
Հ.Բ.Ը.Մ. Կեդր. Վարչութեան  
Փարիզ

Ազնուայարգ պարոն Նախագահ,  
Հայ Գրագէտներու Բարեկամներ Հրատարակչական Մարմինը, որ ինը տարիներէ ի վեր ծանօթ էր *Նահատակ Գրագէտներու Բարեկամներ* անունով, գործունէութեան նոր շրջան մը կը թեւակոխէ, լոյս ընծայելով իր մատենաշարին 11րդ հատորը, *Արդի Հայ Գրականութիւն*, ժողովածու մը, ուր քով

հունիս 22-ին 1917

Գրադատության կոմիտեի նախագահին

ՔԱՆՈՒՄ

1. ԱՄՆԱԿԱՆ ԳՐԱԳՆԱԿԱՆ ԲԵՐՈՒՄ	1.00
2. ԱՄՆԱԿԱՆ ԳՐԱԳՆԱԿԱՆ ԲԵՐՈՒՄ	1.00
3. ԱՄՆԱԿԱՆ ԳՐԱԳՆԱԿԱՆ ԲԵՐՈՒՄ	1.00
4. ԱՄՆԱԿԱՆ ԳՐԱԳՆԱԿԱՆ ԲԵՐՈՒՄ	1.00
5. ԱՄՆԱԿԱՆ ԳՐԱԳՆԱԿԱՆ ԲԵՐՈՒՄ	1.00
6. ԱՄՆԱԿԱՆ ԳՐԱԳՆԱԿԱՆ ԲԵՐՈՒՄ	1.00
7. ԱՄՆԱԿԱՆ ԳՐԱԳՆԱԿԱՆ ԲԵՐՈՒՄ	1.00
8. ԱՄՆԱԿԱՆ ԳՐԱԳՆԱԿԱՆ ԲԵՐՈՒՄ	1.00
9. ԱՄՆԱԿԱՆ ԳՐԱԳՆԱԿԱՆ ԲԵՐՈՒՄ	1.00
10. ԱՄՆԱԿԱՆ ԳՐԱԳՆԱԿԱՆ ԲԵՐՈՒՄ	1.00

Մ. Արմենյան  
 22 հունիս 1917  
 Գրադատության կոմիտեի նախագահին  
 Քա. Պոստի, Քա. (1917)



քովի եկած են երկու տասնեակ արտասահմանեան գրողներ, իրենց արձակներով, քերթումներով, կենսագրական նօթերով եւ լուսանկարներով:

Կը հաւատանք որ ծանօթ էք արդէն մեր գործին: Առիթն օգտուելով Չեր ուշադրութեան կը յանձնենք օրինակ մը մեր վերջին հրատարակութենէն, որպէս զի գաղափար մը կազմէք ինք տարիներէ ի վեր անընդհատ տարուած աշխատանքին լրջութեան եւ յարատեւ ոգիին համար, որուն նպատակն է եղած հայ գրականութեան անցեալ եւ ներկայ արժէքները գիրքերու մէջ ամփոփել, զանոնք կորուստէ փրկել, ժողովուրդին տալով ընթերցանութեան ընտրուած

հատորներ:

Չենք մոռցած քանի մը տարիներ առաջ Հ.Բ.Ը. Միութեանդ նիւթական քաջալերութեան արժէքը, որ հակառակ իր համեստութեան, մեզի համար բարոյական խթան մը ըլլալէ չի դադարեցաւ: Ինչպէս նաեւ մեր մատենաշարին նախորդ տասը հատորներէն գնումը 200 օրինակ գիրքերու, որոնցմով ձեր հսկողութեան տակ գտնուող վարժարաններուն եւ երիտասարդական ակումբներուն գրադարանները ճոխացուցիք:

Անելորդ է քացատրել մեր մշակոյթի արժէքները ինչպէս նաեւ գաղութահայ նորահաս սերունդները փրկելու անյետաձգելի աշխատանքին կարեւորութիւնը, որուն լծուած ենք նաեւ մենք, մեր ուժերուն ներած չափով եւ անշահախնդրութեամբ մը, որուն ապացոյցը տուած ենք տարիներէ ի վեր:

Հրատարակչական այս ձեռնարկը պիտի շարունակենք այն հաւատքով եւ խանդավառութեամբ, որով սկսանք: Պէտք ունինք սակայն նորանոր զոհողութիւններու եւ նիւթական քաջալերութեան:

Կը սիրենք յուսալ, որ ինչպէս անցեալին մէջ, նոյնպէս ներկայիս, ձեր հետաքրքրութեան առարկան պիտի դարձնէք այս նուիրական գործը, եւ պիտի հաճիք բերել ձեր դրական քաջալերութիւնը:

Ընդունեցէք այս առթիւ, Ազնուաշուք պարոն նախագահ, մեր յարգանքին ջերմ հաւաստիքը:

Ի դիմաց՝ Հայ Գրագէտներու Բարեկամներու  
 Զարտուղար Նախագահ  
 Սկրտիչ Պարսամեան Ս. Վրացեան

61 Av. d'Orleans  
Paris XIV

7-22-35  
61 Av. d'Orleans  
Paris XIV



Handwritten notes in Armenian script, including 'Մարտի 22-ին' (March 22nd).

Մարտի 22-ին  
Գրությունը հասել է  
1935 թ. մարտի 22-ին

Հարգելի Վերջին Գրությունը  
հասել է Վերջին Գրությունը  
1935 թ. մարտի 22-ին  
Հարգելի Վերջին Գրությունը  
1935 թ. մարտի 22-ին

Խոսքի Վերջին  
Գրությունը

ԺԹ.

7-22-35  
61 Av. d'Orleans  
Paris XIV

Մեծյարգոյ Պարոն  
Մալեգեան

Շատ երախտապարտ պիտի լինեմ Ձեզ, եթէ հաճէիք ինձ թեկնածութիւնը դնել Հայաստան վերադարձողների ցուցակի մէջ, որ կառավարութիւնը ձեռնարկած է կազմել մօտակայ ներգաղթի<sup>74</sup> համար: Յոյս ունիմ չէք մերժել այս իմ խնդիրս, որի համար իմ շնորհակալութիւններս կը յայտնեմ Ձեզ:

Խորին յարգանքով  
Երուանդ Քոչար<sup>75</sup>

Ի.

5 Նոյեմբեր 1935

Մեծյարգ

Քաղաքացի Դ. Շահվերտեան<sup>76</sup>

Հայաստանի Ներգաղթի Լիազօր Պատուիրակ  
ԲԱՐԻՉ

Յարգելի Լիազօր,

Երէկ ՀՕԿ-ի<sup>77</sup> գրասենեակէն հեռախօսով մեզի յայտարարուեցաւ թէ ներգաղթողներու ցանկագրութիւնը փակուած է:

Մենք կը յուսայինք որ վերջին խորհրդակցութենէ մը վերջ այս գործողութիւնը կը լրացուէր: Երեսանի Կառավարութիւնը, թէ նախորդ եւ թէ ներկայ Վարչապետին օրով<sup>78</sup>, մեզի հաւաստած էր որ մեզի հետ պիտի խորհրդակցիք եւ գործակցիք ներգաղթի խնդիրներուն նկատմամբ, եւ սակայն մեր դերը շատ սահմանափակուեցաւ, եւ կը վախճանք որ ոչ իսկ մեր յանձնարարեալներուն համար մեր ձայնը լրիւ լսելի ըլլայ:

Մասնատրապետ պիտի լինէր Վերջին Գրությունը<sup>79</sup> մէջ թող եւ շէնք ունեցող Հայրենակցականներուն գրկանք ըլլայ. առնուազն 100 ընտանիքի տեղ կայ դրկուած ցուցակներուն համաձայն: Կը փափաքէինք գիտնալ թէ Հապուսի, Խուլու-Թլկատի<sup>80</sup>, Բալուի, Հաճընի, Չնգուշի, Չմշկաձագի, Մէօրփե<sup>81</sup> եւ Խօշմաք գիւղերու, ինչպէս նաեւ Թորքատի հայրենակցականներէն<sup>82</sup> քանի՞ ընտանիք եւ հոգի արձանագրուած եւ ընդունուած են:

Նոյնպէս շատ ցաւ պիտի զգայինք եթէ ցուցակէն դուրս ձգուած ըլլան քանի մը արժանատր անհատներ, զոր յատկապէս յանձնարարած ենք, ըստ ներ-

փակ ցուցակի: Ատոնց առաջին գիծին վրայ կու գան Մելգոնեան 19 սաները (Մուրիայէն), որ արդէն Կառավարութեան կողմէ առաջին օրէն ընդունուած են: Յետոյ, բաղ. Լեւոն Արապեանի զաւակը՝ Կայծակ, Տօք. Էնֆիէճեան<sup>83</sup> եւս ջերմօրէն յանձնարարուած Պերժ (Էօժէն) Բարազեան, Նուպարեան մասնագետ սաներ Մ. Թալեան եւ Ա. Տարազճեան, Տ. եւ Տիկ. Էքշեան, եւ վերջապէս ուրիշներու կարգին գլխատրարար Տեսիմէն Մ. Յակոբեան (կնոջը եւ երեք զաւակներուն հետ), որ խոստացած է 1000 ֆր. ճանապարհածախս վճարել եւ բաց աստի մեզի յանձնած է 9000 ֆրանք պայմանաւ որ իր ընտանիքին բնակարան մը տրամադրուի: Թէեւ առաջիններուն հարցարանները դեռ չենք ստացած, բայց հեռագրով ուզեցինք եւ մինչեւ բանի մը օր ձեզի կը յանձնենք:

Մեզի կը բոլի որ ամէն քիրիմացութեան առաջը առնելու համար անհրաժեշտ է որ գումարում մը ունենանք, կամ գէթ հանդիպում մը, որպէս զի կատարուած իրողութեան մը առջեւ չի գտնուինք, երբ այլեւս ուշ է:

Խորին յարգանքով

ՎԱՐԻՉ-ՊԱՏՈՒԻՐԱԿ

ԻԱ.

31 Յունվար 1936

Մեծայարգ

Քաղաքացի Դ. Շահվերտեան

Ներգաղթի Լիազօր Պատուիրակ

ԲԱՐԻՉ

Յարգելի Քաղաքացի,

Ժընէվէն Նանսէնեան Օֆիսը<sup>84</sup> մեզի կը գրէ թէ Մարտչլէն մեկնող շոգենատերը առառաւելն 900 գաղթական միայն կրնան ընդունիլ, որով կամ պէտք է մեկնողներուն քիւր իջեցնել 1800ի (երկու շոգենաւ), ինչ որ շատ ցաւալի պիտի ըլլար, եւ կամ ամէն ջանք ընել եւ բարձրացնել 2700ի, ինչ որ, հարկ է ըսել, մեծ խանդավառութիւն յառաջ պիտի բերէր գաղութահայութեան մէջ:

Այս մասին եւս կը սպասեմ ձեր շոտափոյթ պատասխանին, որպէս զի ըստ այնմ ժընէվի եւ Բարիզի պաշտօնական շրջանակները այժմէն գիտակ ըլլան դրութեան եւ ըստ այնմ հետապնդեն սկսուած կարգադրութիւնները:

Խորին յարգանքով

ՎԱՐԻՉ-ՊԱՏՈՒԻՐԱԿ

ԻԲ.

Բարիզ, 14 Ապրիլ 1936

Մեծայարգ

Քաղաքացի Դ. Շահվերտեան

Ներգաղթի Լիազօր Պատուիրակ

ԲԱՐԻՉ

Յարգելի Քաղաքացի,

Պատիւ ունինք հաստատելու մեր 13 Մարտ ամսաթիւ նամակը, հայրենակցականներու զանգատներուն նկատմամբ, եւ կը ցաւինք որ հարկադրուած

ենք արձագանգը ըլլալու անվերջ տրտունջներու եւ բողոքներու որ մեզի կը ներկայացուին, ուղղակի կամ մեր ներկայացուցիչներուն միջոցաւ:

Ոմանք կը գանգատին որ իրենց խնդրանքին հետեւանք տրուած չէ որովհետեւ Հօկի անդամ չեն կամ Հօկի անդամ ըլլալով վերջերս բողոքողներուն կողմը անցած են, եւ ոմանք ալ որ չեն կրցած Հօկին նուիրատուութիւն մը ընել այդ առթիւ:

Մեր կրած տպաւորութիւնն է, արդարեւ եւ տպաւորութիւնը շատերունն ալ, թէ ընդհանրապէս ներգաղթի գործը կազմակերպուած է եւ կը կարգադրուի այնպէս որպէս թէ ըլլար Հօկի ձեռնարկ, անոր ազդեցութեան եւ բրօքականտի մէկ միջոցը, եւ այդ նկատողութիւնը այնքան արմատ գտած է որ շատեր Հօկին կ'անդամագրուին ներգաղթի իրաւունք ձեռք բերելու ակնկալութեամբ, եւ կամ կը թելադրուին նուէրներ ընելու նախընտրութիւն ապահովելու համար: Այդ կարծիքին ընդհանրացման մեծապէս սատարած է անշուշտ ձեր ներկայութիւնը Հօկի գրասենեակներուն մէջ եւ Հօկի ներկայացուցիչներուն ալ ձեզի հետ գործակցութիւնը եւ գաւառներու մէջ ընկերակցութիւնը, ներգաղթի բոլոր գործողութեանց առթիւ:

Ամեն պարագայի մէջ, չէինք կրնար բոլորովին լուռ մնալ այդ հարցին հանդէպ եւ կը ներք որ ամէն կողմէ մեզի ուղղուած դիտողութեանց ճնշումին տակ մեր վերապահումին մէջ ամփոփուած չենք մնար այլեւ:

Միւս կողմէ նկատի ունենալով որ մեր Միութիւնը ներգաղթի գործին մէջ համագործակցութեան կապեր ունի ձեզի հետ, ինչպէս նաեւ Հօկին, պիտի առաջարկէինք, մեր պատասխանատուութեան զգացումէն եւս թելադրուած, որ ոչ միայն մեզի հաղորդուին ներգաղթի առթիւ ներգաղթողներու կողմէ եղած այլազան վճարումներուն եւ նուիրատուութեանց ցանկերը, այլ, ինչպէս սովորութիւն է, անոնք հրատարակուին թերթերու մէջ, ինչ որ վերջ կուտայ նաեւ այլընդայլոց գրոյցներուն: Մեզի կը թուի, մինչեւ անգամ, որ այդ գումարները պէտք է յանձնուին Ներգաղթի Ֆօնտի Յանձնաժողովին, որուն մօտ պէտք է կեդրոնանան ներգաղթի անունով կամ պատճառաւ տրամադրուած գումարները, իրենց նպատակներուն յատկացուելու համար:

Լիայոյս թէ մեր թելադրութիւնները կը հաճիք բարեացակամ ոգիով նկատի առնել, կանխաւ կը յայտնենք մեր շնորհակալիքը:

Խորին յարգանքով

ՎԱՐԻՉ-ՊԱՏՈՒԻՐԱԿ

ԻԳ.

15 Մայիս 1936

Մեծայարգ

Քաղաքացի Դ. Շահվերտեան

Ներգաղթի Լիազօր Պատուիրակ

ԲԱՐԻՉ

Յարգելի քաղաքացի,

Երբ ֆրանսահայ ներգաղթողները խանդավառօրէն կ'ուղղուին դէպի մեր սիրելի հայրենիքը՝ Խ. Հայաստան, հաճելի պարտականութիւն մը կը կատարենք Հ.Բ.Ը.Միութեան կողմէ ձեզի ուղղելով մեր սրտագին խնդակցութիւնը եւ շնորհակալիքը կատարուած արդիւնաշատ աշխատանքին համար, որ ան-

գամ մը եւս նուիրագործեց ձեր գնահատելի դերը վտարանդի աշխատատուներու փրկութեան գործին մէջ:

Մաղթելով որ ձեզի տրուի տակաւին բազմաթիւ կարաւաններ փոխադրել «Աւետեաց երկիր» գոր հազարատը հայրենաբաղձներ կ'երագեն, կը համարձակինք ամենայն անկեղծութեամբ ձեր ուշադրութեան յանձնել քանի մը դիտողութիւններ, որպէս զի յառաջիկային անոնք նկատի առնուին նոյն իսկ այս կենսական գործին սիրոյն:

Քանիցս արդէն արձագանգը եղանք մեր Միութեան գործակցող Հայրենակցականներու զանգատներուն, գլխաւորաբար Հապուսիի եւ Բալուի, որ առաջինները եղած են ամբողջովին հատուցանելու իրենց յանձն առած գումարները, ապահովելու Նոր Հապուսիի եւ Նոր Բալուի թաղամասերուն կառուցումը, Նուպարաշէնի մէջ:

Սակայն պարտաւորուած ենք նաեւ արձագանգը ըլլալ ուղղակի կամ մեր ներկայացուցիչներուն միջոցաւ մեզի հաղորդուած տարբեր դիտողութիւններու եւս, քանի որ մեր վրայ պարտք դրած են բողոքողներէն ոմանք որ անոնք ներկայացնենք ձեր բարեացակամ նկատողութեան:

Քիչ չէ արդարեւ թիւը արձանագրուածներու<sup>83</sup> որ կը զանգատին, փաստարկութիւններով, թէ իրենց ներգաղթի խնդրանքին հետեւանք չէ տրուած, ՀՕԿ-ի տեղական վարիչներու անբարեացակամ վկայութեանց վրայ, պարզապէս այն պատճառաւ որ ՀՕԿ-ի անդամ չեն, կամ անդամագրուած ըլլալով վերջերս բողոքած կամ հեռացած են, եւ կամ ուրիշներու նման չեն կրցած ՀՕԿ-ի նուիրատուութիւն մը ընել, ներգաղթի համար:

Թէն չենք կրնար առանց ռեւէ քննութեան հաւատ ընծայել այլընդայլոյ զանգատներու, որ անխուսափելի են գտումի գործողութեանց ատեն, սակայն թոյլ տուէք մեզի յայտնել թէ շատերու տպաւորութիւնն է որ ընդհանրապէս ներգաղթի գործը կազմակերպուած է եւ կը կարգադրուի այնպէս որ թէ ըլլար ՀՕԿ-ի ձեռնարկ, եւ ստուգի այդ ընթացումը այնքան արմատ ձգած ըլլալ կը թուի որ ներգաղթի իրատուք ձեռք բերելու յոյսով յաճախ ՀՕԿ-ին կ'անդամագրուին եւ կամ որպէս զի նախընտրելի նկատուին կը թելադրուին նուէրներ ընելու: Այդ կարծիքին ընդհանրացման սատարած է գուցէ ձեր ներկայութիւնը եւ ներգաղթի գործերուն կեդրոնացումը ՀՕԿ-ի գրասենեակներուն մէջ, որուն անպատեհութիւնը դուք իսկ ինքնաբերաբար յայտնեցիք առթիւ մը, ինչպէս եւ ձեր մշտական գործակցութիւնը ամէն տեղ ՀՕԿ-ի ներկայացուցիչներուն հետ միայն, ներգաղթի գործողութեանց ընթացքին:

Անտարակոյս այդպիսի դիտողութեանց բնաւ տեղի պիտի չի տրուէր, եթէ ներգաղթը կազմակերպուէր որպէս պետական գործ, ձեր հեղինակաւոր դեկավարութեան ներքեւ, կազմութեամբք ներգաղթի մարմիններու, որոնց ձեր իրատուքն է անշուշտ հրաւիրել այն գաղութահայ կազմակերպութիւնները միայն որոնց գործակցութեան պէտքը կը զգացուի:

Մենք կը կարծենք նաեւ որ կարգ մը անտեղի դիտողութեանց եւս առաջքը կ'առնուի, եթէ զանազան ձեւերու եւ անուններու տակ զանձուած նուիրատուութեանց մասին ըլլայ բանաւոր կարգադրութիւն մը:

Նկատելով որ Հ.Բ.Ը.Միութիւնը ներգաղթի ձեռնարկին մէջ ձեզի հետ գործակցութեան կապեր ունի, եւ վերջերս ալ ՀՕԿ-ի հետ ներգաղթի ֆոնտի հանգանակութեան գործին մէջ կապ հաստատած է, այդ իսկ պատճառաւ մեր պատասխանատուութեան զգացումէն եւս թելադրուած, պիտի առաջարկէինք

որ ոչ միայն մեզի հաղորդուի ներգաղթի առթիւ ներգաղթողներուն կողմէ եղած այլազան վճարումներու եւ նուիրատուութեանց ցանկը, այլ, ինչպէս սովորութիւն է, անոնք հրատարակուին բերթերու մէջ ալ: Անլի ճիշդ պիտի ըլլար, մեր ըմբռնումովը, որ այդ գումարները յանձնուէին Ներգաղթի Ֆոնտի Յանձնաժողովին, քանի որ որոշում կայացած էր անոր մօտ կեդրոնացնել ներգաղթի անունով եւ ներգաղթի առթիւ տրամադրուած գումարները, բնականաբար իրենց նպատակներուն յատկացուելու համար:

Կը սիրենք յուսալ որ մեր սրտցաւ թելադրութիւնները կը հաճիք բարեացակամ եւ ներողամիտ ոգիով նկատի առնել, այն վատահուօքեամբ թէ մեր լաւագոյն ջանքերը կը ձգտին առաւելագոյն ծառայութիւնը մատուցանելու մեր հայրենիքին եւ հայրենակիցներուն, եւ թէ այդ ուղղութեամբ միշտ հաճոյքով պիտի տրամադրենք ձեզի մեր սրտագին աշխատակցութիւնը, առանց փոյթ ընելու թէ մեր Միութեան դերը կը նսեմացուի ընդհանրապէս եւ նոյն իսկ կը քննադատուի ոմանց կողմէ, հակառակ որ անիկա ներգաղթի գործին միշտ բերած է ամենալայն օժանդակութիւն:

Խորին յարգանքով

ՎԱՐԻՉ-ՊԱՏՈՒԻՐԱԿ

Ի.Գ.

18 Մայիս 1936

Մեծայարգ

Քաղաքացի Ա. Եսայեան<sup>86</sup>

Նախագահ Ժողկոմիտորիի Կից Ներգաղթի Կոմիտէի

ԵՐԵՒԱՆ

Յարգելի Նախագահ,

Պատիւ ունինք ներփակ ձեզի յղելու, առ ի գիտութիւն, պատճենը դիտողագրի մը գոր ցաւ ի սիրտ հարկադրուեցանք ուղղելու Ներգաղթի Լիազօր Քաղ[աքացի] Շահվերտեանի, եւ որ ինքզինք կը բացատրէ:

Մեզի կը թուի թէ փափկանկատ լուծութիւն մը ներելի պիտի չըլլար մեր կողմէ, երբ այնքան մեծ կարեւորութիւն կ'ընծայենք ներգաղթին, որպէս գաղութահայ աստանդական ու հալածական աշխատատեղերուն փրկութեան միակ միջոցը:

Հետեաբար կը խնդրենք թոյլատու գտնուիլ որ չուզեցինք ծածկել թէ ներգաղթին որպէս ՀՕԿ-ի ձեռնարկ, եւ ոչ թէ պետական ձեռնարկ կատարուելուն երբեք չենք կրնար մեր համամտութիւնը յայտնել, որովհետեւ չենք կրնար ընդունիլ որ ներգաղթը ըլլայ այս կամ այն կազմակերպութեան բրորականտի եւ ազդեցութեան միջոց մը, այլ միայն եւ միայն մեր սիրելի հայրենիքին, անոր [ժողովուրդին ու դէկավարներուն] պանծացումին պատեհութիւնը:

Այս տխուր երեւոյթին մէկ նոր եւ ցաւալի արտայայտութիւնը կը նկատենք նաեւ այն տարօրինակ ցոյցը որ կատարուած է «Մինայիա» շոգենաւին մեկնումի պահուն, երբ նախապէս որոշուած եւ բանաձեւուած հեռագիրներէն դուրս, ներգաղթողներու կողմէ շնորհակալութեան հեռագիր մը կարգադրուած է<sup>87</sup> միմիայն ՀՕԿ-ի Ֆրանսայի Կեդր. Վարչութեան հասցէին, քաղ. Շահվերտեանի ստորագրութեամբ կարծես հրապարակային ցոյց մը ընելու համար Հ.Բ.Ը.Միութեան դէմ, ցոյց մը որ առնուազն ներգաղթողներուն ապե-

րախտութեան եւ վարիչներուն անփափկանկատութեան ցուցադրումը կրնար ըլլալ:

Անշուշտ մենք ցոյցի եւ փառքի համար չէ որ կը կատարենք մեր պարտականութիւնները, եւ գիտենք որ ոմանք ամէն ջանք կ'ընեն նսեմացնելու մեր դերը եւ ուրանալու իսկ մեր օժանդակութիւնները, բայց ուրիշներ շատ կարեւորութիւն կ'ընծայեն այդ երեսօթին, երբ գիտեն թէ ինչ գոհողութիւններ ըրաւ մեր Միութիւնը այս ներգաղթին առթիւ եւս, ծախսեց աւելի քան 2000 անգլ. ոսկի ներգաղթի յարակից անհրաժեշտ ծախսերու համար, մինչդեռ ոչ մէկ հայ կազմակերպութիւն դոյզն մասնակցութիւն մը չի բերաւ:

Այս սրտցաւ նկատողութիւնները ձեզի ներկայացնելով ուրիշ նպատակ չունինք բայց եթէ խնդրել որ յառաջիկայ ներգաղթի ձեռնարկները կազմակերպուին այլապէս, եւ մեր Միութեան չընծայուի լոկ արկղակալի մը դերը, որ կը կայանայ ամենայնայնայնապէս ծախսն իսկ վճարելու համակերպութեան մէջ:

Մենք վստահ ենք նաեւ որ ձեր յստակատեսութեամբը եւ կորովամտութեամբը պիտի յաջողիք փութացնել յառաջիկայ ներգաղթը, որ անյետաձգելի կարիք մըն է գաղութահայութեան համար, եւ կարգադրել այնպէս որ արձանագրութիւնները եւ ձեւակերպութիւնները երկար ամիսներ չի տեւեն, սրտատրոփ սպասցնելով բազմահազար արձանագրողներ որ հեւ ի հեւ կը սպասեն մեկնումի ազդանշանին երբ իրենցմէ մաս մը միայն այդ բախտին արժանացած է:

Խորին յարգանքով  
ՎԱՐԻՉ-ՊԱՏՈՒԻՐԱԿ

ԻՆՆ.

Հ.Ս.Հ.Խ.

ՆԵՐԳԱՎՄԹԻ ԼԻԱԶՈՐ

9 Rue Bourdaloue, 9

Paris IX

Մեծայարգ Պր. Վ. Մալեզեան

Վարիչ-Պատուիրակ Հ.Բ.Ը.Միութեան

Փարիզ

Յարգելի Պր. Վ. Մալեզեան,

Խնդրում եմ ընդունիք եւ հաղորդէք ձեր Միութեան Կեդր. Վարչական Ժողովին իմ շնորհակալիքը այն ջերմ զգացումների համար, որոնցմով ձեր խնդակցութիւնն էք արտայայտում ներգաղթի գործում ձեռք բերած բարեղէյ արդիւնքների վերաբերեալ: Ուրախ եմ յայտնելու որ այդ հարցում, ինչպէս Միութեանը հաւաքական ջանքերը, նոյնպէս եւ ձեր անձնական բարեկամեցողութիւնը մեծապէս դիւրացուցին իմ աշխատանքները եւ սատարեցին գործի յաջողութեանը:

Paris, le 19 Մայիս 1936

Téléphone: Trudaine 79-68



բշնամի՝ կամ առ նազն՝ անհարազատ տարրերից: Ես ճիշտն ասած, ցառուն եմ որ դուք ոչ միայն հաւատ էք ընծայում եւ նկատի էք առնում, այլեւ պաշտօնական գրութիւնների նիւթ էք դարձնում այդ կարգի բշնամական ասէ-կօսէները, որոնց աղբիւրների դէմ բողոքողների դիրքում միայն ցանկանում էի տեսնել ձեզ:

Ինչ վերաբերում է ներգաղթողների կողմից Խորհրդային Հայաստանին եղած կանաւոր նւիրատութիւններին եւ Խորհրդային քաղաքացիութեան ու վիզայի ծախքերի համար *ունետրներից միայն* գանձած գումարներին, դրանց հաշիւը ես պարտաւոր եմ տալ իմ Կառավարութեանը: Ոչ ձեր Միութիւնը եւ ոչ էլ Ներգաղթի Ֆօնտի Կեդր. Մարմինը, որոնց հետ ես սիրով համագործակցել եմ ներգաղթի ընդհանուր գործին մէջ, խառնելու չեն իրենց չը պատկանող հարցերին:

Ես միշտ էլ հաճոյքով նկատի եմ առել ինձի եղած առողջ թելադրանքները, ինչպէս դուք էլ առիթներ էք ունեցել տեսնելու, բայց խնդրում եմ, առհասարակ, զբաղել այն խնդիրներով՝ որոնք ձեր իրատեսութեան սահմաններից դուրս չեն ելնում եւ չեն դժարացնում մեր փոխադարձ սիրալիր աշխատակցութիւնը, որից միայն կարող է օգուտել մեր աշխատաւոր ժողովուրդը:

Ընդունեցէք, յարգելի Պր. Մալեգեան, իմ յարգալիր զգացումները:

Հ.Ս.Խ.Հ.ի ներկայացուցիչ եւ  
Ներգաղթի Լիազօր Պատուիրակ  
Դ. Շահվերդեան

## ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

<sup>1</sup> Մեր խօսքը կը վերաբերի հայերէնով լոյս տեսած երկհատորեակին, որ ձախող փոխադրութիւն մըն է ֆրանսերէնով կամ անգլերէնով պատրաստուած բնօրինակէն: Ահաւասիկ բովանդակութիւնը առաջին հատորին ներքին անուանաբերքին եւ անոր հանդիպակաց էջին. «Դար մը պատմութիւն Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան, Հատոր առաջին, 1906-1940, Գահիրէ-Փարիզ-Նիւ Եորք, 2006: Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան հարիւրամեակին (1906-2006) առիթով հրատարակուած երկ՝ նախաձեռնութեամբ ՀԲԸՄ-ի Կեդրոնական Վարչութեան, ղեկավարութեամբ Յարութիւն Ռ. Գէորգեանի եւ Վահէ Թաշճեանի (ՀԲԸՄ-ի Նուպարեան գրադարան, Փարիզ), հայերէնի թարգմանեցին Գրիգոր Շահվերդեանը եւ Շաղիկ Արծրունին»: Էջը յաւելուածաբար կը տեղեկացնէ. «Այս հատորները (?) հրատարակուածն են Նազար եւ Արտեմիա Նազարեաններու (ԱՄՆ) մեկենասութեամբ»: Հաւանաբար գրաշարական վրէպով մը «հատորը» դարձած է «հատորները»: Աշխատութեան երկրորդ հատորը, որ կը վերաբերի միութեան 1941-2006 տարիներու գործունէութեան, հրատարակուած է մեկենասութեամբը Պերճ եւ Վերա Սեդրակեաններու (ԱՄՆ):

<sup>2</sup> *Ոսկենատեան Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան – Ամառնայ Յորելեան – 1906-1931*, Ա. Հատոր, Բարիզ, 1935, էջ 17: Հատորին պատրաստութեան աշխատանքները ղեկավարած է միութեան վարիչ-պատուիրակ եւ ընդհանուր տնօրէն Վահան Մալեգեանը, զիստոր աշխատակից ունենալով գրադարանապետ Արամ Անտոնեանը եւ գործակիցներուն մէջ հաշուելով Լեւոն Բաշալեանը, Արշակ Զօպանեանը, Վահան Թէքեանն ու այլ նուիրեալներ:

<sup>3</sup> Նոյն, էջ 9, 45, եւն.:

<sup>4</sup> ՀԲԸՄի Կեդրոնական Վարչական Ժողովի արխիւներուն մէկ մասը տողերը գրողիս նախաձեռնութեամբ եւ Միութեան ղեկավարութեան հաւանութեամբ 1990ին Փարիզի Նուպարեան Մատենադարանի պահեստանոցէն փոխադրուեցաւ Նիւ Արրզի:

- դասատրման եւ ուսումնասիրման նպատակով: Դոկտ. Էդուարդ Լ. Մելքոնեան հոն էր որ հակեցաւ դասատրման ենթարկուող արխիւային նիւթերուն վրայ եւ անոնց մէկ մասը հիմք ծառայեցուց ՀԲԸՄի պատմութեան նուիրուած առաջին յուրջ աշխատասիրութեան *Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Պատմութիւն*, Երեւան, 2005, հրատարակութիւն Կարպիս Լ. Նագարեան Հիմնադրամի:
- <sup>5</sup> Լեւոն Բաշալեան (1868-1943): Արեւմտահայ պատմութեան գողտրիկ էջեր պարզեամ այս գիրի ու գրականութեան մարդը, որ նոյնքան մըն ալ տէր էր հասարակական ջիդի, Փարիզ հաստատուելէ ետք ՀԲԸՄի եւ Հայ Ազգային Պատուիրակութեան ծիրին մէջ ունեցաւ նկատառելի գործունէութիւն: Ինչպէս այս եւ յաջորդ նամակներէն ի յայտ կու գայ, ան վարած է Հայ Մտատրականներու Օգնութեան Յանձնաժողովին քարտուղարութիւնը կամ ատենադպրութիւնը, առ այդ ստորագրելով (ոչ միշտ) յատկացումներու մերժումը իմացնող կամ ընծայումը անտող նամակները:
- <sup>6</sup> Վճարագիր (Ֆր.):
- <sup>7</sup> Միամանրոյի կամ Ատոմ Եարճանեանի (1878-1915) այրին:
- <sup>8</sup> Վստահ չենք, բայց կը բուի թէ այս նամակին հեղինակն է շարք մը պարբերականներու հրատարակիչ ու խմբագիր ֆրանսաբնակ Լեւոն Համբարձումեանը (1885-1970):
- <sup>9</sup> Յապատումը Հայ Մտատրականներու Օգնութեան Յանձնաժողովին: Կը հանդիպի մաւ ՎՍՕՅ տարբերակով:
- <sup>10</sup> Գերմանիշակագոյն Բ ճառագայթ եւ ռատիում (Ֆր.):
- <sup>11</sup> Շարակցական հիւստածքի չարորակ ուռուցք (Ֆր.):
- <sup>12</sup> Բջիջներու մէջ արգելափակեալ եւ տեղափակեալ (Ֆր.):
- <sup>13</sup> Տիգրան Կամսարական (1866-1941), որ իր *Վարժապետին Աղջիկը* նորավէպով (Պոլիս, 1888) նոր հուն բացաւ արեւմտահայ արձակագրութեան մէջ, Եգիպտոս ծխախոտի արտադրութեանը գրադելէ ետք անցած էր Փարիզ եւ կը գլխատրէր Հայ Մտատրականներու Օգնութեան Յանձնաժողովը: Ան մաւ իր անունով հաստատած էր գրական մրցանակ մը Երեւանի մէջ:
- <sup>14</sup> Դարձանումի ժամանակացոյցը ներկայացնող տետր:
- <sup>15</sup> Արշակ Չօպանեան (1872-1954), որ Ֆրանսայի մէջ նկատուած էր «Հայ մշակոյթի դեսպան», առաջին օրէն մօտիկ կանգնած էր ՀԲԸՄի եւ անդամակցած անոր գանազան մարմիններուն:
- <sup>16</sup> Վահան Մալեգեան (1871-1966): Մասնագիտութեանը իրաւաբան, Մալեգեան երկար տարիներ գործեց իրրեւ ՀԲԸՄի Ընդհանուր Տնօրէն եւ Վարիչ Պատուիրակ, իր անձնական դրոշմը դնելով Միութեան շարք մը կարեւոր իրագործումներուն վրայ:
- <sup>17</sup> Անձանօթ:
- <sup>18</sup> Թեոդիկ կամ Թեոդորոս Լապճինճեան (1873-1928) այս նամակներուն մէջ յիշատակուած է երկու դերով հրատարակիչ *Ամենուն Տարեցոյցը* եզակի տարեգիրքերուն եւ դասատու ՀԲԸՄի Մելգոնեան Կրթական Հաստատութեան:
- <sup>19</sup> Թեոդիկի հրատարակած *Ամենուն Տարեցոյցը* տարեգիրքը հայ պարբերական մամուլի մարզին մէջ կը մնայ բացառիկ երեւոյթ: Գալուստ Կիւլպենկեան Հիմնադրամը վերջին տարիներուն նախաձեռնարկ եղաւ տարեգիրքերու շարքին վերահրատարակութեան Հալէպի մէջ, Սուրիա:
- <sup>20</sup> Միմոնիկ Բիրումեան կամ Փիրումեան կը վարէր Փարիզի մէջ Խորհրդային Միութեան Լիագօր Ներկայացուցչութեան քարտուղարի պաշտօնը:
- <sup>21</sup> Յստակ է թէ երեւութապէս անպատեհութիւն նկատուածը քերթածին արեւելահայերէնով գրուած շրջալն է:

- <sup>22</sup> Չալեն Պատրիարք Տեր-Եղիայեան (1868-1947) իբրև կտակակատարը Մելգոնեան Կտակին, հիմնական դերակատարութիւն սը ունէր խնդրոյ առարկայ շրջանին Մելգոնեան Կրթական Հաստատութեան յանձանձումին մէջ:
- <sup>23</sup> Լեւոն Թաշճեան (1872-1942), կրթական մշակ, որ առաւելապէս պաշտօնավարած է եգիպտոսի մէջ, բայց 1925-1926 կրթական տարեշրջանին եղած է տնօրէն Մելգոնեան Կրթական Հաստատութեան:
- <sup>24</sup> Մելգոնեան Կրթական Հաստատութեան հիմնադիրներուն անունը շատեր գրած են ու կը գրեն «Մելքոնեան» տարբերակով: Պաշտօնական ձեւն է «Մելգոնեան»:
- <sup>25</sup> Եղուարդ Գօլանճեան (1880-1957), բանաստեղծ, ուսուցիչ, հրապարակագիր եւ բարգձմանիչ:
- <sup>26</sup> Գարրիէլ Նորատունկեան (1852-1936): Օսմանեան Կայսրութեան մէջ իբրև պետական դէմք ծանօթ այս դիւանագետը, որ նաեւ ունեցած է բանասիրական հակումներ, վարած է Հայ Ազգային Պատուիրակութեան նախագահութիւնը Պօղոս Նուպարէն ետք եւ գրադեցուցած է ՀԲԸՄի փոխ-նախագահի պաշտօնը:
- <sup>27</sup> Կարելի չեղաւ մշտել ինքնութիւնը տիկին Մամուրեանի, թէև հաւանական է որ ան կողակիցն ըլլայ Արեւելեան Մամուլի հիմնադիր Մատրէոս Մամուրեանին (1830-1901): Մատրէոսի որդի Հրանտը (1875-1935), որ հօր մահէն ետք շարունակած էր խմբագրել վերոյիշեալ թերթը, փրկուելով 1922ի Չմիտնիոյ աղէտէն, հաստատուած էր Յունաստան:
- <sup>28</sup> Սկրտիչ Պեշկեպաշլեան (1828-1868), բանաստեղծ, որ իր համազգային համբար կը պարտի Ձէյթունի հերոսական ապստամբութիւնը շօշափող չափածոյ տողերուն:
- <sup>29</sup> Նշան Պեշկեպաշլեան (1896-1972), առաւելապէս ծանօթ իբրև երգիծագիր:
- <sup>30</sup> Մարկոս Աղաբէգեանց (1830-1908), կրթական, հասարակական եւ քաղաքական գործիչ, հրապարակագիր:
- <sup>31</sup> Այրին նահատակ գրող Մելքոն Կիւրճեանի (1859-1915): Թերեւս տեղին ըլլայ մշտլ թէ տակաւին 1909ին, Հրանդ հրաւեր կարդացած էր Պօղոս Նուպարի հասնելու գաւառահայութեան կարիքներուն, ի միջի այլոց ըսելով. «Շո՛ւա հասէք, Փաշա: Թող երկնայ թխագոյն ակօսը աշնան մշուշին ու անձրիին կաթիլներուն տակ. Թող կենսատու հատիկը աւանդ դրուի մեր հողերուն տաքուկ ծոցին մէջ... Ահաւասիկ կը դիմեմ ձեզի, բարձապատիւ Փաշա, մեր հողերուն ձայնովք, մեր տուններուն հելքովք» (Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւն, 75 Տարի Մէր, Ծառայութիւն, Երագ, հրատարակութիւն ՀԲԸՄ Կեդր. Վարչ. Ժողովի, 1981, Մետրղ Պրոք, Նիւ Դըրզի, ԱՄՆ: Հատորը քաղած ու ծանօթագրած է բանաստեղծ, կրթական մշակ Չարեն Մելքոնեանը եւ խմբագրած է իրաւարան Միսաք Հայկենցը՝ Ընդհանուր Տնօրէն ՀԲԸՄի):
- <sup>32</sup> Պոլսոյ Նոր Լուրի աշխատակից, որուն կենսագրական տուեալները ծանօթ չեն մեզի:
- <sup>33</sup> Նոր Լուր ամենօրեայ, Պոլիս, հրատարակուիլ սկսած 1924ին՝ Վարդան Թովմասեանի արտօնատիրութեամբ եւ Վահան Թոշիկեանի խմբագրումով:
- <sup>34</sup> Հետաքրքրական հաստատում սը, որ կը յուշէ Թուրքիոյ մէջ հայ կրթական գործին դիմագրուած դժուարութիւնները առկայ անբարենպաստ պայմաններու հետեւանքով:
- <sup>35</sup> 4 Մարտ 1927 թուակիր նամակին մէջ Բաշալեան ստորագրած է իբրև Ընդհանուր Քարտուղար ՀՄՕՅի:
- <sup>36</sup> 4 Մարտ 1927 թուակիր նամակին մէջ Կանսարական ստորագրած է իբրև Նախագահ ՀՄՕՅի:
- <sup>37</sup> Լեւոն Էսանճեան (1885-1935), բանաստեղծ, որ նաեւ կատարած է գրադատական փորձեր ու քննադական շարժումէն ետք պահ սը գրադած է Յունաստան ապաստանած հայ որբերու հոգատարութեամբ:

- <sup>38</sup> Րաֆայել կամ Ռաֆայել Չարդարեան (1896-?), որդին նահատակ գրող Ռուբեն Չարդարեանի, ինք ալ գրադամ գրականությունը:
- <sup>39</sup> Քսանականներուն ՀԲԸՄը կեանքի կոչում էր քարոզչական յանձնախումբ մը Արշակ Չօպանեանի ատենապետութեան ներքե, յատկապէս Երուսալայի քաղաքական շրջանակներուն մօտ յառաջ տանելու համար հայ ազգային շահերուն վերաբերող քարոզչական գործունէութիւն մը:
- <sup>40</sup> Ռուբեն Չարդարեան (1874-1915), նահատակ գրող եւ հրապարակագիր:
- <sup>41</sup> Արմեն Շիտանեան (1870-1932), վիպասան եւ ուսուցիչ, հեղինակ ժողովրդական վէպերու, որոնք անյագօրէն ընթերցուած են իրենց ատենին:
- <sup>42</sup> Նամակը գրուած է «Յորելեանական Յանձնախումբ "Ա. Շիտանեան" 35-ամեայ Գրական Կրթական Գործունէութեան - Comité Jubilee "Armen Chidanian"» վերտառութիւնը կրող նամակաթուղթի մը վրայ եւ իբրեւ քղթակցութեան հասցէ հեղինակը նշած է՝ Վասիլէվսքի No 11, Վառնա:
- <sup>43</sup> Կոստան Չարեան (1885-1969), բանաստեղծ եւ արձակագիր, որ սերունդներու յիշողութեան մէջ կը մնայ յատկապէս իր խնդրայարոյց *Նար Լեբան Վրայ* վէպին ողիսականով:
- <sup>44</sup> Այդ մասին տես նաեւ՝ այս հատորին մէջ տեղ գտած Վարդան Մատթեոսեանի հրապարակումը:
- <sup>45</sup> *Անահիտ*, Արշակ Չօպանեանի հիմնած ամսաթերթը, որ շուրջ երկու տասնամեակի դադարտ ետք, 1929ին վերադին յայտնուած էր ընթերցողներուն:
- <sup>46</sup> Մալեգեան նամակին առաջին էջի վերի ձախ անկիւնին ունի հետեւեալ գրանցումը. «Դժուար կ'ըլլայ նոր նպատակ մը կարգադրել, նախ որ ինք չէ դիմած, յետոյ արդէն անգամ մը ստացած է նպատակ?»:
- <sup>47</sup> Խայտատակ (թրք.):
- <sup>48</sup> Մինաս Չերազ (1852-1929), բանաստեղծ եւ հասարակական ու մշակութային գործիչ, որ 1912ին գործակցեր է Պօղոս Նուպարի հետ իբրեւ անդամ 1912ին կեանքի կոչուած Ազգային Պատուիրակութեան եւ 1914ին վերջնականապէս հաստատուեր է Փարիզ:
- <sup>49</sup> Շիրվանգաղէ կամ Ալեքսանդր Մովսիսեան (1858-1935), արձակագիր եւ քատերագիր, որուն ՀՄՕՅն յատկացում կատարած պէտք է ըլլայ անոր հերթական անգամ Փարիզ բնակած շրջանին (1919-1926):
- <sup>50</sup> Չապէլ Եսայեան (1878-1943), խիզախ գրագիտուի, որ 1933ին պիտի երթար հաստատուիլ Երևան՝ ընդառաջելով Խորհրդային Հայաստանի կառավարութեան հրաւերին:
- <sup>51</sup> Հայկ Պերպերեան (1887-1978), բանասէր, հրատարակիչ խմբագիր *Revue des Études Arméniennes* հանդէսին: Վարած է Հայ Ազգային Պատուիրակութեան քարտուղարի պաշտօնն ու մօտէն գործակցած Պօղոս Նուպարի եւ ՀԲԸՄի ղեկավար մարմիններուն հետ:
- <sup>52</sup> Նախադէպ (ֆր.):
- <sup>53</sup> Վահան Մալեգեան այս նամակին վերի աջ անկիւնին արձանագրած է. «Մտաւորականներու Հիմնադրամէն 600 Ֆր. կը ղրկէք Կոստան Չարեանի Չօպանեանի միջոցաւ»:
- <sup>54</sup> Հայ պատմագրութեան մէջ իբրեւ կեղծ յորջորջուած Օսմանեան [երկրորդ] սահմանադրութեան հոչակումը կատարուած է 24 Յուլիս 1908ին:
- <sup>55</sup> Վարդուի եւ Մաքրուի Թաշճեան քոյրերը իրենց անհատական միջոցներով Գահիրէի մէջ հիմնած են երկուտ կրթարանը, որ գործած է 1917էն մինչեւ 1937:
- <sup>56</sup> Ստորագրութիւնը կը յայտնէ երկու բան: Նամակը գրուած է օգնող անձի մը ձեռագրով, որ տարբեր է ստորագրողին ձեռագրէն, իսկ ստորագրութիւնը կատարուած է ակնյայտ ճիգով, պարզելով ենթակային տեսողութեան իրապէս խանգարուած ըլլալը:

- <sup>57</sup> Ակնարկութիւնը վերը բերուած թիւ 15 նամակին:
- <sup>58</sup> Գրիգոր Մինապեան կը վարէր ՀԲԸՄի Կեդրոնական Վարչական Ժողովի ատենադպիրի պաշտօնը:
- <sup>59</sup> Եռանդովդ (Ֆր.):
- <sup>60</sup> Գեղամ Տէր Կարապետեան (1866-1919), ծանօթ իբրև Մշոյ Գեղամ, գրադած է ուսուցչութեամբ, յեղափոխական գործունէութեամբ եւ գաւառի կեանքը պատկերող գրականութեամբ:
- <sup>61</sup> Գեղամ Բարսեղեան (1883-1915), որ նախորդին նման ունի գաւառական կեանքը պատկերող գրական փորձեր, եղած է Պոլսոյ *Ազատամարտ* օրաթերթի օգնական խմբագիր եւ *Մեհեան* գրական պարբերաթերթի խմբագրական կազմի անդամ:
- <sup>62</sup> Արփիար Արփիարեան (1851-1908), ի տարբերութիւն յիշեալ գրողներէն ոճանց, գոհ գացած էր ոչ թէ Յեղասպանութեան, այլ «եղբայրասպան» մահափորձի: Իր հրապարակագրական էջերով ան ջատագոված է հայկական ընդհանուր միութեան մը ստեղծման գաղափարը եւ կը նկատուի հոգեւոր հայրերէն մին ՀԲԸՄի:
- <sup>63</sup> Գրիգոր Զօհրապ (1861-1915): Արեւմտահայ արձակի ինքնատիպ վարպետ, խմբագիր, հիմնադիր *Մասիս* գրական շաբաթաթերթի եւ 1908ին՝ Օսմանեան երկրորդ սահմանադրութեան հռչակումէն ետք՝ երեսփոխան Օսմանեան խորհրդարանի:
- <sup>64</sup> Տիգրան Չօկիւրեան (1884-1915), արձակագիր, համահրատարակիչ *Ոստան* գրական հանդէսին եւ ուսուցիչ:
- <sup>65</sup> Օհան Կարօ կամ Յովհաննէս Կարապետեան (1890-1933), ինչպէս իր մահուան բուականէն կը տեսնուի, նահատակ գրող մը չէր, բայց հաւանաբար առանձին հատորով մը իր տեղը գրուած է հրատարակուած գործերու տուեալ շարքին մէջ Նահատակ Գրագետներու Բարեկամներ ընկերակցութեան անդամակցած ըլլալուն հանգամանքով:
- <sup>66</sup> Երուանդ Օտեան (1869-1926) երգիծագիրը նահատակ գրող մը չէր, բայց իր ժողովուրդի զաւակներուն նահատակութիւնն ու սփիւռքացումը ամէնօրեայ ներկայութիւն մը դարձած էին իր հրապարակագրական թէ վիպագրական էջերուն մէջ ահաւոր Յեղասպանութենէն ետք:
- <sup>67</sup> Երուանդ Սրմաբէշխանլեան կամ Երուխան (1870-1915) հայ գրականութեան տըրած է անոր գլուխ-գործոցներէն *Ամիրային Աղջիկը* վեպը: Զբաղած է ուսուցչութեամբ եւ խմբագրութեամբ:
- <sup>68</sup> Արտաշէս Յարութիւնեան (1873-1915), բանաստեղծ եւ գրադատ:
- <sup>69</sup> Ռուբէն Սեակ (1885-1915): Մասնագիտութեամբ բժիշկ Ռուբէն Չիլիմկիրեան կամ Սեակ հայ գրականութեան տուած է չափածոյ եւ արձակ գողտրիկ էջեր:
- <sup>70</sup> Տիրան Չրաքեան կամ Ինտրա (1875-1921) հանճարեղ արձակագիրն ու բանաստեղծը կենդանի նահատակներէն մին կարելի է նկատել Յեղասպանութեան իր մտային խանգարման բերումով, ինչպէս էր պարագան հայ երգի եւ երաժշտութեան հանճարին Կոմիտասի:
- <sup>71</sup> *Մայլզգեան այս նամակին ի պատասխան, 5 Հոկտեմբերին, ի միջի այլոց կը յայտնէ. «... մեր գնահատումը համեստ մասնակցութեամբ մը արտայայտելու բաղձանքով, ներփակ կը որկենք 500 ֆրանքի չէք մը, խնդրելով որ գարդ հրատարակուած զիրքերէն համարժէք բանակութեամբ մեզի տրամադրէք Միութեանս հաստատութեանց համար»:*  
*25 Հոկտեմբեր թուակիր նամակով մը Մ. Պարսամեան կը յայտնէ թէ «ստացուած 500 ֆրանքին փոխարէն ՀԲԸՄի պիտի տրամադրուի 38 Հատոր գիրք (երեքական Հատորներէն) հրատարակեալ Հատորներէն եւ երեքական օրինակ «Հետզհետեւ լոյս տեսնելիք հատորներէն», ընդհանուր «750 ֆրանք արժէքով»): Կցեալ ցուցակ մը կը պարզէ թէ հրատարակուած եւ հրատարակելի Հատորներէն իւրաքանչիւրին Համար որպէս փոխարժէք նշանակուած է 20 ֆրանք, բացի Գեղամ Տէր Կարապետեանին նուիրուած Հատորէն, որուն փոխարժէքն է 30 ֆրանք:*

Այս նամակին վրայ Մալգեանի կատարած մակագրութիւնը կը յուշէ թէ ստացուած հատորներէն մէկական օրինակ պիտի տրամադրուի Փարիզի (Նուպարեան) Մատենադարանին, Նիկոսիոյ (Մելգունեան կրթական Հաստատութեան), Նուպարաշէնի Մատենադարանին:

13 Մարտ 1937 թուակիր եւ հազար չորս հարիւր Ֆրանքի դիմաց տրուած ստացագիր մը՝ Մերուժան Պարսամեանի ստորագրութեամբ, կը ներկայացնէ հետեւեալ ցանկը, որուն ճակատին Մալգեան արձանագրած է. «Երիտասարդաց ակումբներուն համար»:

ՄԱՏԵՆԱԾԱՐ

1. ՌՈՒԲԷՆ ԶԱՐԴԱՐԵԱՆ	20 օրինակ
ԱՐՉԱԿ ԷՉԵՐ ԵՒ ՀԵՔՒԱԹՆԵՐ	
2. ՀՐԱՆԴ (ՄԵԼՔՈՆ ԿԻՐՃԵԱՆ)	15
ՊԱՆԴՈՒԽՏԻ ԿԵԱՆՔԷՆ	
3. ԳԵՂԱՄ ՏԵՐ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ	20
ՏԱՐՕՆԻ ԱՇԽԱՐՀ	
4. ԳԵՂԱՄ ԲԱՐՍԵՂԵԱՆ	10
ԱՄԲՈՂՁԱԿԱՆ ԳՈՐԾԸ	
5. ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ	30
ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ ԵՒ ՎԻՊԱԿՆԵՐ	
6. ԳՐԻԳՈՐ ԶՕՀՐԱՊ	30
ԾԱՆՕԹ ԴԵՄՔԵՐ, ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ	
7. ՏԻԳՐԱՆ ՉԵՕԿԻՐԵԱՆ	10
ՎԱՆՔԸ-ՀԵՐՈՍԸ	
8. ՕՀԱՆ ԿԱՐՕ	10
ԽՐՃԻԹՆԵՐԷՆ ՄԻՆՉԵՒ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ	
9. ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ	40
ԸՆԿԵՐ ՓԱՆՁՈՒՆԻ	
10. ԱՐՏԱԾԵՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ	15
ԱՐՉԱԿ ԷՉԵՐ ԵՒ ՔԵՐԹՈՒԱԾՆԵՐ	

-----  
200 7 ֆր.էն ֆրանք 1400.-

<sup>72</sup> Սկրտիչ Պարսամեան (1886-1966), արձակագիր, գրադատ եւ խմբագիր, հիմնադիրներէն մին Նահատակ Գրագետներու Բարեկամներ ընկերակցութեան:

<sup>73</sup> Սիմոն Վրացեան (1882-1969), դաշնակցական գործիչ եւ խմբագիր, վերջին վարչապետ Հայաստանի (առաջին) Հանրապետութեան (1920):

<sup>74</sup> 10 Օգոստոս 1931ին Խորհրդային Հայաստանի կառավարութիւնը որոշում կայացուցած էր երկրին սահմանները բանալու արտասահմանի «աշխատատր հայերու» զանգուածային նոր ներգաղթի մը առջեւ, բայց Ֆրանսայէն ներգաղթել փափարողներու առջեւ դուռները բաց յայտարարուած էին միայն 1935ին:

<sup>75</sup> Համաշխարհային գեղանկարչութեան եւ քանդակագործութեան մէջ ինքնուրոյն դպրոց մը հաստատած Երուանդ Քոչար (1899-1979) ներգաղթի շարժումէն օգտուելով Հայաստան պիտի հաստատուէր 1936ին: Տեղին է նշել թէ նամակին վրայ կը հանդիպինք հետեւեալ արձանագրութեան.

*«Նկարիչ Երուանդ Քոչար եւ կինը - պաշտպանեալ Մարիամ Նուպար պէյի մօրաքրոջ տիկին Գարամաճեանի»:* Նոյնի Գարամաճեան (մեց. 1947ին) քոյրն էր Պօղոս Նուպարի:

<sup>76</sup> Համայնավար կուսակցական եւ պետական գործիչ Դանիէլ կամ Դանուշ Շահվերդեան (1882-1941) զանազան ներկայացուցչական պաշտօններ վարած է Խոր-

իրդային Հայաստանն դուրս եւ եղած՝ հիմնական դերակատարներն մին ներգաղթի կազմակերպման աշխատանքներուն:

<sup>77</sup> Հայաստանի Օգնութեան Կոմիտեն ստեղծուած էր 1921 Սեպտեմբեր 18-23ին Երեւանի մէջ, պետական մտայնացումով, գլխատրաբար արտասահմանի հայութենէն օժանդակութիւններ ապահովելով հայաստանարնակ հայութեան նիւթական պայմաններուն բարելաման եւ երկրաշինութեան նպաստելու նպատակով: Ան հետզհետէ ստանձնած էր նաեւ ներգաղթի կազմակերպման աշխատանքները համադրելու պարտականութիւնը: Անոր հիմնադիր անդամներուն մաս կը կազմէին գրող Յովհաննէս Թումանեանը, պատմաբան Լէօն, բառարանագիր Ստեփանոս Մախասեանցը եւ ուրիշ ականատր դէմքեր: ՀՕԿի Կեդրոնական Վարչութեան առաջին նախագահն էր Խորհրդային Հայաստանի Երկրագործութեան Նախարար (Հող-ժողկոմ) Արամայիս Երզնկեանը: Կազմակերպութիւնը շատով պիտի դառնար նաեւ համայնավար գաղափարախօսութիւնը հայկական գաղութներու մէջ տարածող գործիք: Ընթացք մը, որ պիտի առաջնորդէր արտասահմանի զանազան երկիրներու իշխանութիւններուն մօտ գաղթահայութեան շահերու վտանգման եւ հայկական կազմակերպութիւններու միջեւ այլապէս անհարկի պայքարներու:

<sup>78</sup> Նկատի ունի Հայաստանի Ժողկոմխորհի Նախագահ Սահակ Տեր-Գաբրիէլեանը (1886-1937) եւ 1935ին անոր յաջորդած Աբրահամ Գուլոյեանը (1898-1938):

<sup>79</sup> Նուպարաշէնը, գոր խորհրդային իշխանութիւնները պիտի վերանուանէին Սովետաշէն, սկզբնապէս կը նպատակադրէր Հայաստանի մէջ աւանի մը կառուցումով հնարատր դարձնել տասնեակ հազարատր գաղթական հայերու ներգաղթը հայրենիք: Ծրագիրը պաշտօնապէս առաջարկուած էր ՀԲԸՄի 14րդ տարեկան Ընդհանուր Ժողովին մէջ, գումարուած Ֆիլատելֆիա, ԱՄՆ, եւ զանազան ձգձգումներէ ետք, Հայաստանի իշխանութիւնները 1930ի Մայիսին վերջապէս հասանած էին որ ձեռնարկուի անոր իրականացման:

<sup>80</sup> Վահէ Հայկի աշխատասիրութեամբ հրատարակուած *Խորհրդի եւ Անոր Ոսկեղէն Դաշտը* մեծահատոր յուշանատեանին մէջ (Նիւ Եորք, 1959), Թլկատին գիտըր ներկայացուած է նաեւ Խույլու եւ ոչ թէ Խույլու անունով (էջ 791):

<sup>81</sup> Վերը յիշուած հատորը կը յիշատակէ Մտորթէ կամ Մտորփէ գիտըր եւ ոչ թէ Մտորփէ (էջ 943): Մեքենագրական վրէպի արդիւնք է «Մտորփէ»ն:

<sup>82</sup> Ցեղասպանութենէն փրկուած տարագիր հայութեան մասնիկները հետզհետէ հիմնեցին իրենց հայրենի բնակավայրերուն անունով հայրենակցական միութիւններ, օգնութեան հասնելու կարօտեալ հայրենակիցներու եւ վառ պահելու հաւատըրը հայրենի հող վերադարձի: Այդ հայրենակցականներէն գէթ յիշեալները իրենց հանգանակած գումարները յանձնեցին ՀԲԸՄի, Նուպարաշէն աւանին մէջ իրենց բնակավայրերուն անունով թաղամասեր ունենալու համար:

<sup>83</sup> Արէնքաբնակ բժիշկ Տիգրան Էնֆիէճեան եղած է Ռամկավար Ազատական Կուսակցութեան ակնառու դէմքերէն մին:

<sup>84</sup> Իր մարդասիրական աշխատանքներով Խաղաղութեան Նուպիէան Մրցանակին արժանացած Ֆրիտիոֆ Նանսէնի անունը կրող Գաղթականներու Միջազգային Գրասենեակը 1930ի աշնան Ազգերու Լիկային կողմէ յիազօրութիւն ստացած ըլլալով, իր աշխատանքներուն պաշտօնապէս լծուած է 1 Ապրիլ 1931ին, կեդրոնատեղի ունենալով Ժընեւը: Խորքին մէջ, այս գրասենեակը, իր նոր անուանումով, կու գար շարունակել Նանսէնի գլխատրութեամբ եւ Ազգերու Լիկային հովանաւորութեամբ նախապէս գործող Գաղթականներու Բարձր Բոնիտրութեան աշխատանքները, որոնց կարեւոր դաշտերէն մին էր Հայաստանը:

<sup>85</sup> Մեկրոնեանի յիշեալ աշխատութեան մէջ (էջ 221) այս բառը մեքենագրական սխալի հետեւանքով վերարտադրուած է իբրեւ «արձանագրութիւններու»:

- <sup>86</sup> Արսէն Եսայեան (1898-1938), համայնավար կուսակցական եւ պետական գործիչ, որ իր վարած կարգ մը կարեւոր պաշտօններու շարքին, իր մահէն քիչ առաջ կոչուած էր ՀՕԿի Նախագահի պաշտօնին:
- <sup>87</sup> Մելքոնեանի յիշեալ աշխատութեան մէջ (էջ 222), դարձեալ մեքենագրական վրէպով մը, վերարտադրեալ բնագրէն դուրս մնացած են այս էական բայր եւ, քանի մը բառ անդին, «ցոյց մը ընելու համար Հ.Բ.Ը.Միութեան դէմ», քառախումբը:
- <sup>88</sup> Ակնարկութիւն այն հայրենակցական միութիւններուն, որոնք իրենց սկզբնական ծրագրերն ընդարձակելով, ներգաղթի շարժումէն ետք ընդգրկած էին նաեւ Հայաստանի վերաշինութիւնը իբրեւ ծրագրային կամ նպատակային կէտ, առանխապէս լծուելով կորսուած արեւմտահայկական քաղաքներու եւ աւաններու անունով Հայաստանի մէջ նոր աւաններ հաստատելու աշխատանքին:
- <sup>88</sup> Ֆրանսական մանրադրամ:

PAGES FROM THE AGBU CHRONOLOGY  
(Summary)

VATCHE GHAZARIAN  
mayrenipublishing@comcast.net

In 2006 the Armenian General Benevolent Union celebrated its 100<sup>th</sup> anniversary. Though some books were published on the occasion and the history of the AGBU was written, there is a lot to be done to unearth the full picture of AGBU contribution and input both to the Diaspora and to the Armenian state.

By publishing twenty-six letters, Vatche Ghazarian brings to the limelight some aspects of the second and third decades of AGBU history.

Due to the dire conditions of the Armenian refugees and Genocide survivors, alongside international philanthropic organizations, AGBU embarked on a project to address their social, hygienic and cultural needs.

In 1925 AGBU initiated a support project for the needy remaining Armenian intellectuals who had survived the massacres during the Genocide. The project intended to extend yearly financial allocations both to the families of the massacred intellectuals and to other intellectuals who were facing financial hardships in their newly adopted countries.

Along with the sixteen letters that shed light on this project, Ghazarian publishes two letters addressed to the AGBU and written by a literary group called "friends of martyred authors". The group, established in 1925, aimed at publishing the literary works of the massacred authors as a way of disseminating awareness and preserving Armenian heritage among the forthcoming generations. These letters asked for financial support from AGBU to maintain the aims and objectives of the group, and the response was positive.

The third bunch of letters deals with repatriation. AGBU was financially involved in the repatriation project that was initiated by the Soviet Armenian authorities. Ghazarian publishes seven letters which shed light on some aspects of the ins and outs of the process including the organization of repatriation, registration of names of families to be repatriated, donations collected, the not-so-smooth cooperation of the representative of the Soviet Armenian authorities with the AGBU officers, and the extensive collaboration of the Soviet Armenian representative with the *Hayasdani Oknutian Gomide* (Armenia Aid Committee) activists.